

Խաղաղության աղոթք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

Մայիսի 9-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Սուրբ Վարդան եւ Սուրբ Հովհաննէս Սկրտիչ մատուռ-մկրտարանում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ճայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ կատարվեց խաղաղության աղոթք Հայաստանի ու Արցախի խաղաղության եւ ապահովության համար:

Հայոց Հայրապետը, Մայր Աթոռի միաբաններն ու ներկա հավատացյալ ժողովուրդը միասնաբար աղոթք վերառաքեցին առ Աստված՝ հայցելով, որ Տերը խաղաղության մեջ ապահով եւ անսասան պահի Հայաստան ու Արցախ հայրենի աշխարհները, անառիկ՝ հայրենյաց սահմանները, ամուր եւ քաջ՝ հայոց բանակի զինվորականներին:

Այս առիթով Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր պատգամը բերեց ներկա ժողովուրդին:

*Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի
խոսքը խաղաղության աղոթքի առիթով*

«Եվ այս է այն հաղթությունը, որ հաղթում է աշխարհին՝ մեր հավատը»

(Ա Հովհ. Ե 4):

Սիրելի՛ ժողովուրդ հայոց, Հայրական սիրով բերում ենք ձեզ Մեր օրհնությունը եւ բարեմաղթանքները Մայիսի 9-ի՝ Երկրորդ համաշխարհային պատերազմի հաղթանակի եւ Շուշիի ազատագրման նվիրական օրվա առիթով:

Այս տոները մեզ համար դարձել են խորհրդանշող բռնության ու չարի դեմ պայքարի, հայրենի հողի վրա անկախ կյանք կերտելու մաքառումի եւ ազատատենչ ոգու հաղթության: Քրիստոնյա մեր ժողովուրդը պատմության ընթացքում հաճախ ենթարկվել է արհավիրքների ու նեղությունների, սակայն իր լուսավոր հավատքով ու գալիքի տեսիլքով վեր է հառնել փորձություններից եւ առ Աստված ապավինությամբ վերահաստատել իր վճռականությունը արժանապատիվ գոյության եւ հարատևության:

Ծանր ու դժվարին օրեր ենք ապրում այսօր: Ամենօրյա բռնաճնշումների եւ նվաստացումների է ենթարկվում շրջափակման

մեջ գտնվող Արցախի մեր ժողովուրդը: Նվազ չեն մատնե Հայաստանի առջեւ հառնած սպառնալիքները, տակավին անհաճախս են սահմանները՝ լեցուն թշնամու սադրանքներով եւ հարձակումների վտանգով: Հայաստան եւ Արցախ հայրենի մեր երկրի առջեւ ծառացած մարտահրավերները մտահոգություններով ու տագնապներով են համակել հոգիները մեր ժողովրդի զավակների՝ ինչպես հայրենիքում, այնպես եւ սփյուռքում:

Այս ցավալի իրավիճակում անգամ, երբ կորցրել ենք Շուշին եւ Արցախ աշխարհի զգալի հատվածը, երբ ունենք հազարավոր զոհեր ու վիրավորներ, բազում գերեվարվածներ ու անհայտ կորածներ, մենք նշում ենք այս օրը՝ համոզումով, որ ամուր եւ անսասան է մեր ժողովրդի ոգին, անկոտրում՝ ապրելու եւ արարելու կամքը, եւ հաստատում հայրենիքի հանդեպ նվիրումը:

Սիրելի՛ներ, Մայիսի 9-ը ոչ միայն արժեւորում է անցյալի հաղթությանց, այլեւ ամրագրումը հանձնառու պատասխանատվության՝ հավատքով եւ միասնականությամբ կերտելու մեր գալիք հաղթանակները: «Եվ այս է այն հաղթությունը, որ



հաղթում է աշխարհին՝ մեր հավատը», – հաստատում է առաքյալը:

Մենք հավատում ենք մեր ժողովրդի աստվածատուր ուժին՝ պարտությունը վերածելու հաղթանակի, մահը՝ կյանքի, ցավը՝ ուրախության: Հավատում ենք մահեւ, որ կարող պիտի լինենք վանելու մեզանից վախն ու թերահավատությունը, անտարբերությունը ու հարմարվողականությունը՝ վստահությամբ, որ համագգային ու հայրենական կյանքում պիտի գերակայեն ու հաղթանակեն աստվածասիրությունը, հայրենասիրությունը ու արժանապատվությունը:

Արդ, սիրելի՛ ժողովուրդ հայոց, ապրենք ու գործենք այս գիտակցությամբ եւ Մայիսի 9-ը դիտարկենք ոչ միայն Երկրորդ աշխարհամարտի, արցախյան հերոսամարտի պատմական իրադարձությունների, Շուշիի ազատագրման նշանակալի թվական, այլ որպես առաքելություն, որպես ջանք եւ կամք՝ ուղղված նոր հաղթանակների ու ձեռքբերումների կերտմանը: Ծա-

ռացած մարտահրավերներին հանդիման՝ մեր պարտքն է լինել միասնական եւ բոլոր հնարավոր միջոցներով ջանքեր գործադրել հանուն մեր պետականության զորացման, Արցախի ինքնիշխանության ու շահերի պաշտպանության: Հավատքով զորացյալ մնանք, չվհատվենք եւ չընկրկենք նեղությունների ու դժվարությունների առջեւ, արթուն պահենք քաջարի մույն ոգին, որ դրսևորվել է մեր ժողովրդի հերոս զավակների կողմից Հայրենական մեծ պատերազմում եւ Շուշիի ազատագրման օրերին:

Աղոթենք միասնաբար առ Երկնավոր մեր Տերը եւ հայցենք, որ օրհնի եւ Իր Սուրբ Աջի հովանու ներքո խաղաղ ու անվտանգ պահպանի Հայաստան եւ Արցախ հայրենի մեր երկիրը, զորացնի մեզանում հույսն ու լավատեսության ոգին՝ ի սեր հայրենյաց եւ մեր ժողովրդի բարօր ու լուսավոր գալիքի:

«Շնորհք, սեր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ մեզ եւ ընդ ամենեսեան. ամէն»:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց



Ապրիլի 30-ին Արգենտինայից ժամանած պատվիրակությանը

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ճայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Արգենտինայի հասարակական գործիչներից, լրագրողներից,

իրավաբաններից եւ գործարարներից կազմված պատվիրակությանը՝ ուղեկցությամբ արգենտինայի գործարար Խուան Պաբլո Գեչիչյանի:

Տիար Գեչիչյանը, Նորին Սրբությանը ներկայացնելով հյուրերին, տեղեկացրեց, որ պատվիրակության անդամները Հայաստան են ժամանել ի մոտո ծանոթանալու հայ ժողովրդին, նրա մշակույթին, կրոնին, պատմությանն ու հոգեւոր արժեքներին:

Վեհափառ Հայրապետը, իր օրհնությունը բերելով ներկաներին, գոհունակությամբ ընդգծեց, որ երկու երկրների հարաբերությունները հատկանշված են սերտ բարեկամությամբ, եւ Արգենտինան դժվարին իրավիճակներում մշտապես զորակից է եղել հայ ժողովրդին: Ամենայն Հայոց Կաթողիկոսը երախտագիտությամբ արձանագրեց, որ Հայոց ցեղասպանությունից մազապուրծ հայերը, հանգրվանելով Արգենտինայում, կարողացան վերակազմակերպել իրենց ազգային-հոգեւոր կյանքը եւ իբրեւ արժանավայել քաղաքացիներ՝ իրենց կարեւոր ներդրումը բերել երկրի առաջընթացին՝ վայելելով Արգենտինայի ժողովրդի եւ իշխանությունների սերն ու հարգանքը:

Հանդիպմանը Հայոց Հայրապետն անդրադարձավ նաեւ տարածաշրջանում առկա իրավիճակին՝ արգենտինացիներին տեղեկություններ փոխանցելով դարաբաղյան հակամարտության սկզբնավորման, Ադրբեջանի՝ 44-օրյա պատերազմից հետո արցախահայության եւ Հայաստանի ինքնիշխան տարածքների նկատմամբ շարունակվող ոտնձգությունների, Բերձորի միջանցքի արգելափակման եւ դրա հետեւանքով Արցախում ստեղծված հումանիտար ճգնաժամի, ինչպես նաեւ Ադրբեջանի վերահսկողության տակ անցած տարածքներում պատմամշակութային ու հոգեւոր արժեքների ոչնչացման փաստերի վերաբերյալ:

Ամենայն Հայոց Հայրապետը պատասխանեց նաեւ հյուրերի հարցերին, որոնք վերաբերում էին միջեկեղեցական հարաբերություններին եւ դարաբաղյան հակամարտության կարգավորման գործում քույր եկեղեցիների հոգեւոր պետերի ձեռնարկած քայլերին: ➔ Էջ 2

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

← էջ 1

Մայիսի 3-ին

Ֆրանսիայի Օ-դը-Ֆրանս շրջանային խորհրդի նախագահի գլխավորած պատվիրակությանը

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ֆրանսիայի Օ-դը-Ֆրանս շրջանային խորհրդի նախագահ Բեռնարդ Բերտրանի գլխավորած պատվիրակությանը: Հանդիպմանը ներկա էին նաև Ֆրանսիայում Հայաստանի Հանրապետության դեսպան Հասմիկ Տոլմաչյանը և Ֆրանսիայում Արցախի Հանրապետության մշտական ներկայացուցիչ Հովհաննես Գետրոյանը:

Հանդիպմանը Նորին Սրբությունը գոհունակությամբ նկատեց, որ պատվիրակության այցը Հայաստան և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին եւս մեկ վկայություն է հայ-ֆրանսիական բարեկամության և Ֆրանսիայի՝ հայ ժողովրդին ցուցաբերած զորակցության:

Անդրադառնալով հետպատերազմյա մարտահրավերներին և առկա դժվարին իրավիճակին՝ Հայոց Հայրապետն իր խոր մտահոգությունը հայտնեց Բերտրանի միջանցքի արգելափակման և դրա հետևանքով ստեղծված հումանիտար աղետի, ինչպես նաև օրերս Բերտրանի միջանցքի սկզբնամասում Ադրբեջանի կողմից իսկիչ անցակետի տեղադրման առնչությամբ: Ըստ Նորին Սրբության՝ այս կապակցությամբ միջազգային հանրության անհամարժեք արձագանքը, ինչպես և Հաագայի միջազգային դատարանի որոշման անտեսումն անհետեանք թողնելը տեղիք են տալիս Ադրբեջանի նման քաղաքականության անարգել իրագործման:

Իր խոսքում Վեհափառ Հայրապետը նաև անդրադարձավ գերիների վերադարձման և Ադրբեջանի վերահսկողության տակ անցած տարածքներում հայկական հոգեւոր ու մշակութային ժառանգության պահպանման խնդիրներին:

Ֆրանսիայի Օ-դը-Ֆրանս շրջանային խորհրդի նախագահ Բեռնարդ Բերտրանը Նորին Սրբությանը տեղեկացրեց, որ իր այցի նպատակն է իրավիճակին տեղում



ծանոթանալ՝ իր աջակցությունը բերելու առկա մարտահրավերների հաղթահարման գործում, ինչպես նաև նպաստելու հայ-ֆրանսիական համակողմանի գործակցության խորացմանը: Պարոն Բեռնարդ Բերտրանն Ամենայն Հայոց Հայրապետին նաև հավաստիացրեց, որ անհրաժեշտ ջանքեր կգործադրվեն ռազմագերիների վերադարձման ու Արցախի հայկական պատմամշակութային հուշարձանների և սրբավայրերի անաղարտ պահպանման հարցում:

Զրույցի ընթացքում Վեհափառ Հայրապետը հույս հայտնեց, որ տիար Բերտրանը եւս եվրոպական միջազգային ատյաններում հետևողականորեն կբարձրաձայնի արցախահայության ազատ և անկախ ապրելու իրավունքի պաշտպանության մասին:

Զրուցակիցներն անդրադարձան նաև դարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորմանն ի նպաստ տարածաշրջանի հոգեւոր առաջնորդների համդիպումներին և դրանց ընթացքում արձանագրված արդյունքներին:

Հնդկաստանում եկեղեցական կառույցների և մասնավորապես Կալկաթայի հայոց մարդասիրական ճեմարանի գործունեությանը: Նորին Սրբությունը, ի դեմս դեսպանի, իր գնահատանքը հայտնեց Հնդկաստանի իշխանություններին կրթական հաստատության նկատմամբ դրսևորվող ուշադրության համար:

Իր հերթին նորանշանակ դեսպանը, անդրադառնալով հայերի պատմական ներկայությանը Հնդկաստանում և հայ-հնդկական հարաբերություններին ու ներկայիս գործակցությանը, տեղեկացրեց Կալկաթայի հայոց մարդասիրական ճե-

մարան իր այցի մասին՝ նկատելով, որ այն նաև յուրօրինակ կամուրջ է երկու երկրների մշակութային կապերի զորացման գործում:

Զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց Հնդկաստանում հայ համայնքի կյանքին և հայկական եկեղեցիների բարվոք վիճակին: Խոսվեց նաև Հայաստանի և Արցախի առջև ծառացած լրջագույն անվտանգային մարտահրավերների, Ադրբեջանի վերահսկողության տակ անցած տարածքներում հայկական հոգեւոր ու մշակութային ժառանգության պահպանման խնդիրների մասին:



Մայիսի 7-ին

Հայկական համալսարանի շրջանավարտներին և ուսանողներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայկական համալսարանի շուրջ 150 շրջանավարտի և ուսանողի:

«Հայկական մախազի» գիտակրթական ՀԿ-ի կողմից իրականացվող Հայկական համալսարան ծրագրի համահիմնադիր պատմական գիտությունների թեկնածու Վարուժան Գեղամյանը Վեհափառ Հայրապետին ներկայացրեց կրթական կառույցի նպատակները, իրականացվող ծրագրերն ու արձանագրած հաջողությունները: Պարոն Գեղամյանն ընդգծեց նաև, որ կրթությունից զատ՝ համալսարանը նպատակ է հետապնդում ուսանողներին ծանոթացնելու և հաղորդ դարձնելու ազգային արժեքներին:

Իր հայրական սերն ու օրհնությունը բերելով Հայկական համալսարանի շրջանավարտներին և ուսանողներին՝ Նորին Սրբությունը կարեւոր նկատեց գիտելիքի փոխանցմանը զուգահեռ հոգեւոր, բարոյական արժեքներով դաստիարակությունը: Հայոց Հայրապետն ընդգծեց՝ հոգեւոր, բարոյական արժեքներով ձեւավորման դեպքում է, որ գիտելիքը մարդուն կարող է պարզել բարոյ ու երջանիկ կյանք:

Հանդիպմանը Նորին Սրբությունը, անդրադառնալով հայրենիքի դժվարին իրավի-

ճակին և հայ ժողովրդի առջև ծառացած մարտահրավերներին, կարեւորեց հայորդիների հայեցի դաստիարակությունը, ինչի շնորհիվ միայն հնարավոր կլինի դուրս գալ առկա ծանր կացությունից: Վեհափառ Հայրապետն էական նկատեց նաև բուհերի դերակատարությունը՝ զորացնելու հայրենասիրության և աստվածասիրության զգացումները:

Զրույցի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը հաստատեց, որ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին մշտապես հայ ժողովրդի մեջ վառ է պահել անկախ պետականության գաղափարը, նաև կարեւորել է արցախահայության ազատ և անկախ ապրելու իրավունքի պաշտպանությունը:

Վերջում Նորին Սրբությունը պատասխանեց ուսանողների հարցերին, որոնք վերաբերում են հասարակության մեջ քրիստոնեական վարդապետության սկզբունքների կիրառմանը և տեղեկատվական դաշտում ծավալվող քարոզչական գործունեությանը:

Հանդիպումից հետո Հայկական համալսարանի շրջանավարտները և ուսանողները Սուրբ Գայանե վանքում մասնակցեցին պատարագի սրբազան արարողությանը:

Մայիսի 4-ին

Հայաստանում Հնդկաստանի Նորանշանակ դեսպանին



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Հնդկաստանի արտակարգ և լիազոր դեսպան Նիլակշի Սահա Սինհային:

Նորին Սրբությունը, շնորհավորելով դեսպանին մշամակման առիթով, մաղթեց արդյունաշատ առաքելությունը Հայաստանում: Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ ընդգծեց, որ երկու երկրների սերտ գործակցությունը պայմանավորված է հայ և հնդիկ ժողովուրդների դարավոր բարեկամությամբ, ապա անդրադարձավ

Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցը «Հաղթանակ» զբոսայգի

Մայիսի 9-ին, Հաղթանակի և խաղաղության օրվա առիթով, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանների ուղեկցությամբ այցելեց «Հաղթանակ» զբոսայգի՝ իր հարգանքի տուրքը մատուցելու Հայրենական մեծ պատերազմում և արցախյան հերոսամարտերում զոհվածների անմար հիշատակին:

Անհայտ զինվորի հուշակոթողի մոտ ծաղկեպսակի զետեղումից հետո Վեհափառ Հայրապետն աղոթք բարձրացրեց առ Աստված՝ համուն հայրենիքի իրենց կյանքն ընծայաբերած քաջ հայորդյաց հոգիների հանգստության և խաղաղության համար:

Լրատվական նյութերը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տեղեկատվական համակարգի



Համբարձում՝ Ճանապարհի դեպի երկինք...

Ի հրաշափառ հարությունից հետո՝ քառասուն օր շարունակ, մեր Տեր եւ Փրկիչ Հիսուս Քրիստոս «...Իրեն կենդանի ներկայացրեց նրանց (իմա՝ Իր աշակերտներին) առաջ շատ ապացույցներով՝ քառասուն օրերի ընթացքում երեւալով նրանց եւ խոսելով Աստծու արքայության մասին» (հմմտ. Գործք Ա 3): Աշակերտներին երեւալու արդեն վերջին օրը Քրիստոս նրանց պատվիրում է չհեռանալ Երուսաղեմից, այլ սպասել Սուրբ Հոգուն, որն Աստծու խոստման համաձայն՝ պետք է իջնէր երկիր. «...Երբ Սուրբ Հոգին իջնէր աշակերտների վրա, նրանք զորություն պետք է առնէին եւ Փրկչի վկայները լինէին Երուսաղեմում, ամբողջ Հրեաստանում ու Սամարիայում եւ մինչեւ երկրի ծայրերը» (հմմտ. Գործք Ա 8):

Քրիստոս վերջին անգամ էր մարմնապես հանդիպում Իր աշակերտներին. եկել էր հրաժեշտի պահը: Նրանք գնում են մինչեւ Բեթանիայի Ձիթենյաց լեռը: Այդժամ՝ անսահման տառապանքի բովով անցնելուց եւ հանուն մարդկության փրկության մինչեւ իսկ դժոխք իջնելուց հետո, ասես որպէս ամփոփում Իր փրկչական, սրբալույս առաքելության՝ Քրիստոս դիմում է Իր աշակերտներին՝ ասելով. «Ինձ է տրված ամեն իշխանություն երկնքում եւ երկրի վրա. ինչպէս Հայրն Ինձ ուղարկեց, ես էլ ձեզ եմ ուղարկում: Գնացե՛ք, ուրեմն, աշակերտ դարձե՛ք բոլոր ազգերին, նրանց մկրտե՛ք Հոր եւ Որդու եւ Սուրբ Հոգու անունով: Ուսուցանե՛ք նրանց պահել այն բոլորը, ինչ որ ձեզ պատվիրեցի: Եվ ահա ես ձեզ հետ եմ բոլոր օրերում մինչեւ աշխարհի վախճանը» (Մատթ. ԻԸ 18–20): Արդեն իսկ հարություն առած, մարմնի կապանքներից ազատված Հիսուս դեպի վեր՝ Իր հայրական օթեւանում է բարձրանում: Նախ Նա բարձրացնում է ձեռքերը, օրհնում Իր աշակերտներին եւ աստիճանաբար հեռանում նրանցից. «Եվ մինչ Նա օրհնում էր նրանց, բաժանվեց նրանցից եւ դեպի երկինք էր վերանում» (Դուկ. ԻԴ 50): Քրիստոս բարձրանում է այնտեղ, որտեղից եկել էր, որպէսզի Իր երկրային կյանքի խրատական օրինակով մեզ եւս բարձրացնի այդ լուսեղեն օթեւանները. այնտեղ, ուր «բազում օթեւաններ կան, այլապէս Քրիստոս չէր ասի մեզ, թե՛ գնում եմ ձեզ համար էլ տեղ պատրաստելու: Եվ երբ Նա գնա ու մեզ համար տեղ պատրաստի, դարձյալ կգա եւ մեզ կվերցնի Իր մոտ, որպէսզի որտեղ Նա է գտնվում, մենք եւս լինենք այնտեղ...» (հմմտ. Հովհ. ԺԴ 2–3):

Տիրուք սքանչելահրաշ համբարձումից քիչ հետո լուսավոր մի ամպ Նրան ծածկում է առաքյալների աչքերից: Ահա այսպէս է տեղի ունենում Փրկչի առժամանակյա հեռացումն այս աշխարհից: Առժամանակյա, որովհետեւ Քրիստոսի համբարձումից հետո ապշահար աշակերտներին երեւում են երկու սպիտակազգեստ մարդիկ, որ ասում են. «Ո՛վ գալիլեացիներ, ինչո՞ւ եք կանգնած մայրում երկնքին, այս Հիսուսը, որ ձեր միջից երկինք վերացավ, պիտի գա նույն ձեռով, ինչպէս տեսաք Նրա երկինք գնալը» (Գործք Ա 11): Հրեշտակներն այս խոսքերով առաքյալներին, նաեւ մեզ հայտնեցին Քրիստոսի համբարձվելու եւ վերստին գալու մասին:

Համբարձման խորհուրդն ընկալելու համար անհրաժեշտ է ուշադրություն դարձնել որոշ հարցադրումների եւ իրողությունների: Ինչո՞ւ Քրիստոս քառասուն օր երկրի վրա մնաց եւ ապա միայն համբարձվեց երկինք, ինչո՞ւ Նա գնաց՝ մեզ այս աշխարհում «միայնակ» թողնելով, ի՞նչ բարձրացավ, անէացավ Փրկիչը, ի՞նչ է Նրա բնակության այդ երանավետ վայրը...:

Քրիստոսի համբարձումը բնագանգական, անդրանցական խորհրդաբանություն ունի. որքան հրաշալի է Քրիստոսի վերհամբառնումը մարդկային աչքերի, նույնքան սքանչելի է խորախորհուրդ է այդ իրողությունը մարդկային հոգու համար:

Մեր Տեր Հիսուս Քրիստոս, գիտենալով մեր մարդկային բնության տկարությունները, մարմնապես չհեռացավ մեզնից, մինչեւ որ Իր հետեւորդների, աշակերտների սրտից չվանեց բոլոր տեսակի կասկածները: Նրա քառասունօրյա երեւումներն ու անկասկածելի ներկայությունը հաստատեցին, որ անհավատալիք, անիրագործելի են անհմարին իրականությունն են դարձել, եւ խաչի ու մահվան խավարը լուսավորվել է փրկության հավիտենական լույսով: Քրիստոս Իր հարությունից հետո կերպով եւ խմբեց աշակերտների հետ (թեպետ դրա կարիքը բացարձակապէս չուներ), որ եւս մեկ անգամ փարատեր այն վախն ու սարսուռը, որ Ինքն այլեւս մեզ հետ չէ: Բացի այդ՝ Քրիստոս եւս մեկ անգամ հաստատում է, որ Իր հարությունը հրաշափառ իրողություն է, եւ Ինքն հարություն է առել այն նույն մարմնով, որով անարգվեց, չարչարվեց ու խաչվեց, եւ այդ նույն՝ փառավորված մարմնով Նա գալու է Իր երկրորդ գալստյան ժամանակ՝ դարձյալ մեր հանդէպ Իր անհուն սերն ու ողորմությունը, բայց նաեւ Իր արդարությունը գործադրելու համար:

Մեր Տեր եւ Փրկիչ Հիսուս Քրիստոս համբարձվելով բազմում է Հայր Աստծու աջ կողմում եւ այդպիսով ցույց տալիս, որ Նա Տերն է ինչպէս երկրի, այնպէս եւ երկնքի:



Հիսուս Քրիստոսի համբարձումը Նրա երկրավոր առաքելության լրումն ու կատարելացումն էր: Քրիստոս, երկինք համբարձելով, ամենքիս հույս տվեց, որ մենք եւս այնտեղ պետք է գնանք:

Քրիստոս, այս աշխարհից վեր համբառնալով, մեզ որք չի թողնում, այլ առաքում է Միխթարիչ Սուրբ Հոգուն՝ մեզ զորացնելու, պահպանելու եւ ապավեն լինելու: Փրկիչը պատգամում է, որ Սուրբ Հոգու տաճարն ու բնակարանը լինելու պարտականություն ունենք մենք՝ ամենքս: Արդարեւ, մարդն Աստծու բնակավայրն է: Աստված բնակվում է մարդու մեջ, եւ մարդ բնակվում է Աստծու սիրտ մեջ, եթե Տիրուք շնորհները պտղաբերում են մարդու հոգում: Այդ պտուղները քրիստոնեական այն առաքելություններն են, որոնք զարդարում են աստվածային սուրբ տաճարը՝ մարդկային հոգին:

Այդ ամենին հակառակ եւ մարդկային բնությանը թշնամի է մեղքը, որ օձի մամա սողոսկում է մարդու մեջ եւ թունավորում աստվածային այն պատկերը, որով կերպավորվել է մարդը: Նախանձը, չարությունը, ատելությունը, հպարտությունն այն ախտերն են, որոնք վանում, հեռացնում են Աստծու Հոգին մեզանից: Սրբությունը չի կարող գոյատևել պղծության կողքին, սակայն այն կարող է սրբել մեղսալի ախտերն ու իբրեւ Աստծուն ընդունելի պատարագ մարդկային հոգին նվիրել Արարչին:

Աստված հոգում է Իր ստեղծած արարածների մասին արարչագործության առաջին իսկ վայրկյանից եւ առ այսօր էլ խնամում ու զորացնում է Իրեն հուսացողներին: Համաձայն Աստվածաշնչի՝ Աստծու ձեռքում են եւ կյանքը, եւ մահը: Աստծու մոտ են երջանկությունը, օրհնությունն ու երանությունը: Դեպի Աստված, դեպի հավիտենական երանավտություն գնալու ճանապարհը սրբությունն է: Այդ ճանապարհը մեզ ցույց տվեցին Աստծու մարգարեները, առաքյալներն ու սրբերը... Այդ ճանապարհը մեզ ցույց տվեց Ինքը՝ Քրիստոս:

Ուրեմն մենք՝ Քրիստոսի անվամբ քրիստոնյա կոչվածներս, պարտավորված ենք հետեւելու այդ սուրբ ճանապարհին, որ դեպի երկինք է տանում՝ հանուն մեր եւ մեր սիրելիների հոգիների փրկության: Այդ փրկությունն Աստծու պարգևն է, որ շնորհվում է: Փրկության այդ ուղով քայլելու համար, սակայն, բավական չէ միայն եսասիրաբար սեփական անձի մասին մտածելը, այլ յուրաքանչյուր ոք ինչպէս սիրում է իր անձը, նույնպէս պետք է սիրի դիմացինին՝ ըստ այն օրինակի, որը փրկության Ուսուցիչը՝ մեր Տեր եւ Փրկիչ Հիսուս Քրիստոս է փոխանցել մեզ. «Սիրե՛ք միմյանց, քանի որ դա է մեծագույն պատվիրանը»: Միմյանց սիրելով՝ մար-

դիկ կիմանան, որ մենք Քրիստոսի եղբայրներն ենք, Հայր Աստծու զավակները եւ Սուրբ Հոգու տաճարն ու բնակարանը: Հակոբոս առաքյալը պատգամում եւ ցույց է տալիս միմյանց սիրելու եւ այդպիսով Աստծու հանդէպ մեր սերը ցույց տալու ճանապարհը. «Միմյանց համար աղոթե՛ք, որպէսզի բժշկվե՛ք,– ասում է առաքյալը.– քանզի արդարի աղոթքը շատ ազդեցիկ է եւ օգնում է»:

Սրբության ճանապարհով դեպի վեր ելած արդարներից երկուսը՝ Քրիստոսի կյանքի սուրբ ընթացքին եւ համբարձմանը ներկա երկու առաքյալները՝ Թադեոսն ու Բարդուղիմեոսը, իրենց Վարդապետի սրբության օրինակով եւ առաքելագործության տեսիլքով վառված, եկան Հայաստան, որ ի կատար ածեն Տիրուք պատգամը՝ «Գնացե՛ք, աշակերտե՛ք եւ մկրտե՛ք»՝ այդպիսով դեպի լուսեղեն երկինք բարձրանալու քրիստոսավանդ ճանապարհն ուսուցանելով նաեւ մեզ: Համբարձման տոնը հայերիս համար առանձնահատուկ է նաեւ պատմական այն իրողությամբ պայմանավորված, որ Ս. Գրիգոր Լուսավորչի՝ Հայոց աշխարհում հիմնադրած սրբազան, նախամեծար Աթոռը, որն իրադարձությունների բերումով տարագրվել էր հայրենիքից, ժե դարում հենց Համբարձման տոնի օրը վերահաստատվեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում: Դեպքերին ժամանակակից Թուրքիայի Մեծնիքեցի վկայում է. «Այն պահին, երբ որ հավատացյալները եւ արեւելյան ամբողջ աշխարհի վարդապետները հավաքվել էին այստեղ՝ այս սուրբ տաճարում, սավառնաթեւ մի արծիվ գալիս է եւ բազմում այս տաճարի խաչի վրա»: Այդժամ բացում են Ավետարանը, ընթերցում սուրբգրային մի հատված, ուր Քրիստոս ասում է. «Այս աշխարհի մեջ նեղություն կտեսնեք, բայց քաջալերվե՛ք, քանի որ ես հաղթեցի աշխարհին»:

Աշխարհին հաղթած Քրիստոսի հաղթության տոնախմբությունն է Համբարձումը: Փրկչի ինքնահայտնումը եւ Նրա առաքելության կատարյալ ամբողջացումն է Համբարձումը: Ամպերի միջով վեր բարձրացող Քրիստոս մեզ ներկայանում է որպէս ճշմարիտ Աստված, եւ եթե մինչ այդ Նա հիմնականում թաքցնում էր Իր աստվածությունը, այժմ բացահայտորեն Իր մասին վկայում է, որ Նա իսկ է Աստծու Որդին՝ ճշմարիտ Մեսիան: Եվ, հիրավի, մենք երբեւէ չէինք հավատա, որ Քրիստոս մեր Փրկիչն է, եթե Նա չգար եւ մեր մեջ չապրեր, մեզ մամա մարդկային մարմին չունենար եւ ցույց չտար, որ Ինքն է, այո՛ր, Փրկիչն ու Ազատարարն այս աշխարհի:

Մեր Տեր եւ Փրկիչ Հիսուս Քրիստոս Համբարձման խորհրդով եւս մեկ անգամ մեզ է հաղորդում փրկության ավետիսը: Ինչպէս Ինքը՝ Քրիստոս, երկինք համբարձվեց եւ բազմեց Հայր Աստծու աջ կողմում, մենք եւս պետք է կարողանանք ելնել երկնային բարձունքներն ու մշտնջենավորապէս վայելել Աստծու երանավետ ներկայությունը: Ուստի եւ Համբարձման խորհրդով լուսազարդված՝ զգեստավորվենք սրբությամբ եւ անդադար աղոթքով ու փառաբանեցե՛ք երկնքի ու երկրի Արարիչ եւ Տեր Աստծու անունը թե՛ այստեղ՝ երկրի վրա, թե՛ այնտեղ՝ երկնքում, դեպի ուր հասնելու ճանապարհը թեպետ փշոտ ու քարքարոտ, խաչի՛ ճանապարհ է, սակայն որի վերջին հանգրվանը Աստծու խաղաղարար ու բերկրալի ներկայությունն է հավիտենական եւ լուսառատ խորաններում:

ԱճՈՏԱ ՀՈՎԱՍԵՓՅԱՆ

Գեւորգ սրկ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Ճանապարհի Խաչի

Մեղավոր սրտիս աղոթքը վերջին՝
Միակ անեղծը համակ աղտեղից,
Քեզ եմ ընծայում, Աստված ու Տեր իմ,
Քոնմ եր այն այնժամ, Քոնմ է եւ նորից...

Քոնմ եր այն այնժամ, երբ որք իմ հոգին
Փնտրում էր դեռ Քեզ, ու դեռ գեթ մանուկ
Աչքերն իմ թաց աղերսում էին
Քո էջը խաչե բարձունքից խղճուկ...

Իջել եւ այժմ. կանգնած դեմ առ դեմ՝
Նայում ես անթաց Դու իմ աչքերին,
Սակայն մեղավոր սիրտը իմ գեթ վեմ,
Գեթ խաչ է նորից Քո ճանապարհին...

Գեթ փշե պսակ ու արցունք են դեռ
Բյուրավոր ու սին աղոթքները իմ,
Վերջինը, սակայն, Աստված իմ ու Տեր,
Թող որ Լնյս լինի Քո ճանապարհին...

Ս. ՆԵՐՍԵՍ ԾՆՈՐԻՊԱԼՈՒ ԽԱՆԵԼՈՒԿՆԵՐԸ

Սկիզբը՝ թիվ 5-6, 8

Թեմու մասին հանելուկի միջոցով Ս. Ներսես Ծնորիպալին ընդգծում է այդ ծառի օգտակարությունը: Ծերամապահությունը կարելի է նշանակություն է ունեցել միջնադարյան արհեստների եւ տնտեսության համար (Գ. Հակոբյան, Ներսես Ծնորիպալի, Երեւան, 1964, էջ 233):

*Ջայն ծառն տես, որ կու ծաղկի,
Տերեն է իւրն զերդ զկաշի,
Նարմով զգեստ մարդկան լինի,
Խիստ վայելուչ եւ ցանկալի:*

Ս. Ներսես Ծնորիպալին բազմաթիվ հանելուկներ է գրել ցորենի վերաբերյալ, որը «կյանք»՝ հաց է տալիս մարդուն: Այս հանելուկներում նկարագրված է հացի արարման ողջ ընթացքը. ցորենը թաղվում է հողի տակ, ձյուն է նստում վրան, սառը հողում նա մեռնում է, բայց երբ գալիս է գարունը, հարություն է առնում, աճում, հասկեր տալիս: Իսկ արդեն աճածը ցորենը քաղում են, կախում, աղում, եւ այն, «անցնելով ջրի ու կրակի միջով», հաց է դառնում: Դ. Գասպարյանն իրավացիորեն նկատում է, որ ցորենին վերաբերող հանելուկներից մեկը հիշեցնում է հայրենի տեսակը: Ծանոթ հայրենը Ս. Ներսես Ծնորիպալին վերամշակել է հանելուկի տեսքով՝ պահպանելով նաեւ ժողովրդախոսակցական միջին հայերենը (տես Դ. Գասպարյան, Հայ հին եւ միջնադարյան գրականության պատմություն, Երեւան, 2009, էջ 435):

*Տեսայ զիմ հոգոյս հոգին,
Որ մեռաւ եւ ի հող թաղեցաւ,
Դարձեալ իմ սիրոյս համար
Նա յարեաւ ու շատ դատեցաւ.
Ի սուր եւ ի կտուր երեկ
Ու քարով նա քարկոծեցաւ.
Ի հուր եւ ի գեղեցի մտաւ,
Իմ հոգոյս հոգի ջահեցաւ*
(անդ, էջ 333–334):

Առանձին եւ կարելի է շարք են կազմում



գրքին, ուսմանը, գիտությանը, գրականությանը, գրեմական պիտույքներին (թուղթ, գրիչ) վերաբերող հանելուկները, որոնք իրենց գեղարվեստական լուծումով այսօր եւս կհետաքրքրեն ընթերցողին: Ահա մտքի մասին հանելուկը (էջ 211):

*Արդ է անթեւ եւ անփետուր,
Քան զծիծառն երթայ նա սուր,
Յերկրէ-յերկիր շրջի թափուր,
Դառնայ ու գայ, բերէ շատ հիւր,
Գետք ի գետոց հանէ նա ջուր,
Քակէ զամուր զտուն եւ զբլուր:*

Բազմաթիվ են գրքին, գրին վերաբերող հանելուկները: Բավականին պատկերավոր է գիր պատասխանն ունեցող հետեւյալ հանելուկը (էջ 251):

*Սօր արգանդն սեւային.
Հայրն տոյմպէս ամենեկին,
Որդիքն սեւ ծնանէին
Եւ ի սպիտակ դաշտ բնակէին:*

Ս. Ներսես Ծնորիպալին հանելուկներում դիմում է համադրության, հակադրության, անձնավորման, ժխտման, չափազանցության, փոխաբերության գեղարվեստական միջոցներին, գործածում բազմաթիվ խորհրդանշներ, որոնց միջոցով նյութն ընթերցողի համար առավել հետաքրքիր է դարձրել:

Այսպիսով՝ Ս. Ներսես Ծնորիպալու հանելուկները հետապնդել են հասարակությանը մարդասիրական, հայրենասիրական գաղափարներով, համակողմանի գիտելիքներով կրթելու նպատակ: Իսկ կյանքի տարբեր բնագավառներին եւ բազմաբովանդակ նյութերին անդրադարձը նպաստել է մանուկների, ինչպես նաեւ տարբեր տարիքի անձանց աշխարհաճանաչողությանը, մտածողությանը զարգացմանը, իրենին ու երեւոյթներին տարբեր դիտանկյուններից եւ պատկերավոր մայելու կարողությանը:

Ս. Ներսես Ծնորիպալու հանելուկներն առաջին անգամ տպագրել է Հակոբ Մեղապարտը 1512–1513 թթ. իր հրատարակած հայերեն առաջին Տաղարանում՝ «Տեառն Ներսէսի Հայոց կաթողիկոսի ասացեալ է Հանելուկս վասն ուրախութեան մարդկան» վերտառությամբ: Հանելուկների սիրված եւ տարածված լինելն են վկայում նաեւ տարբեր ժամանակներում ստեղծված բազմաթիվ տարբերակները: Ս. Ներսես Ծնորիպալու հանելուկներն այսօր եւս չեն կորցրել իրենց արդիականությունը:

Ս. Ներսես Ծնորիպալու հանելուկները 9-րդ դասարանի գրականության դասագրքում ներկայացված են ընդամենը մեկ օրինակով (տես Գրականություն. 9-րդ դասարանի դասագիրք, էջ 157), թեւեւ այս հեղինակին հատկացված ժամանաքանակի մեջ առանձին ժամ է տրված նաեւ հանելուկներին: Ուսուցիչների փորձը վկայում է, որ անգամ տարբեր ընդունակություններ եւ հետաքրքրության աստիճան ունեցող աշակերտները մեծ սիրով են մասնակցում Ս. Ներսես Ծնորիպալու հանելուկների ուսուցման դասընթացին: Հանելուկների դասավանդումը կարելի է իրականացնել տարբեր գործի-

քակազմի ու խաղային միջոցների կիրառմամբ, որոնք մեծ հետաքրքրություն եւ աշխուժություն կառաջացնեն աշակերտների շրջանում: Ուսուցիչը դասի սկզբում կարող է հակիրճ ներկայացնել ստեղծագործության այս տեսակը, խոսել Ս. Ներսես Ծնորիպալու հանելուկների ստեղծման դրդապատճառների, բերած նորույթների մասին: Դասի հիմնական իմաստի ընկալման փուլը կարելի է հատկացնել բուն հանելուկներին եւ դրանք վերլուծելուն:

Ամբողջ դասարանի ներգրավվածությունն ապահովելու նպատակով ուսուցիչը նախապես կարող է առանձին թղթերի վրա տպել եւ աշակերտներին բաժանել Ս. Ներսես Ծնորիպալու հանելուկները: Առավել արդյունավետ եւ տպավորիչ կլինի տեսասահիկի կիրառումը: Եկրանին հայտնված հանելուկը կարող են կարդալ բոլոր աշակերտները: Ուսուցիչը եւ աշակերտները միասին կկարդան եւ կմեկնաբանեն այս ստեղծագործությունները:

Ս. Ներսես Ծնորիպալու հանելուկները գրաբարից ամբողջությամբ աշխարհաբարի չեն փոխադրվել: Դրանց մի մասը փոխադրել եւ առանձին գրքով հրատարակել է վաստակաշատ Արշակ Մադոյանը: Որոշ հանելուկներ փոխադրել են առանձին ուսումնասիրողներ. սա, իհարկե, լրացուցիչ դժվարություններ է առաջացնում ուսուցչի համար: Սակայն նյութից խոսափելու կամ նյութի ներկայացման շրջանակը նեղացնելու փոխարեն ուսուցիչը կարող է տարբեր գործիքակազմի կիրառմամբ նյութը հասանելի դարձնել աշակերտին: Այդպիսի միջոցներից է բացատրական ընթերցանությունը: Քանի որ հանելուկները գրված են միջին հայերենով, հիմնական բովանդակությամբ դրանք այսօր եւս կարող են հասկանալի լինել ընթերցողին: Ուսուցիչը կարող է ընտրել համեմատաբար ընկալելի հանելուկներ եւ օգնել աշակերտներին դասի ընթացքում նախ փոխադրել, ապա՝ լուծել դրանք:

Գրք ԳՆԼՍՏՅԱՆ



Արցախ աշխարհի հրաշքը

Դադիվանքը կամ Խուֆավանքը գտնվում է պատմական Արցախի Վերին հաչեն գավառում՝ Տրտու (Թարթառ) գետի եւ դրա վտակ Դուխխուի միախառնման վայրից մոտ 10 կմ հոսանքն ի վար՝ գետի ձախ ափին՝ անտառածածկ բլրի հարավահայաց փեշին: Արցախի եւ Մոսկվի լեռնաշղթաների՝ թեք բլրակով մերձեցման վայրում ոչ ընդարձակ մի լեռնահովիտ կա: Այդ փոքրիկ, բայց չափազանց գեղեցիկ իջվածքի կենտրոնական բլրակի վրա է կառուցված հայ ճարտարապետության սքանչելի կոթողը:

Բնությունն այստեղ իսկապես շռայլ է: Դադիվանքը կառուցողները մեծ հոգատարությամբ են վերաբերվել շրջակա բնությանը: Անվանի երկրաբան Հ. Աբիխը խոստովանել է, որ ինքն անգործ է նկարագրելու ինչպես Դադիվանքի հուշարձանները, նույնպես եւ նրա շրջակա բնությունը (տես «Геологические наблюдения в нагорной стране между Курой и Араксом». Записки Кавказского отдела Императорского географического общества, 1873, գիրք 8, էջ 63):

«Դադի» եւ «Խուֆա» անվանումների

ստուգաբանությունը հայ մատենագրության մեջ տրվում է երկու տարբերակով. մեկը՝ կապված հայոց ավանդության հետ, մյուսը՝ տեղանքի:

Առաջինն աղերսվում է Թադեոս առաքյալի յոթանասուն աշակերտներից մեկի՝ Դադիի կամ Դադոյի անվանը, որը քրիստոնեություն էր քարոզել Արցախում եւ այստեղ էլ նահատակվել. «Դադին» մի եւթանասնիցս, որ գնաց հրամանաւ Թադէի ի Մեծն Հայք կողմանս հիւսիսոյ, եւ լուծալ գմահն Աբգարու դարձաւ եւ եմուտ ի Փոքր Սինիք, եւ տեղին շինեցաւ վանք եւ յանուն նորա կոչեցաւ Դադիու» (Միքայէլ Ասորի, Ժամանակագրութիւն, յերուսաղէմ, 1871, Յաւելում, էջ 33): Նահատակյալ այս քարոզչի գերեզմանի վրա էլ հետագայում կառուցվել է համալիրի առաջին սրբարանը:

Ինչ վերաբերում է «Խուֆա» անվանը, ապա «խութը» նույնն է, ինչ գրական հայերենով «բլուրը»: Այսպիսով «Խուֆավանք» բառացի նշանակում է բլրի վրա գտնվող վանք: Հայաստանի միջնադարյան պատմա-ճարտարապետական խոշոր եւ ընդարձակ

այս հուշարձանախումբն ազգային պատմության ու մշակույթի նշանավոր օջախներից էր: Այսօր եւս կարող ենք տեսնել վանքի շինությունները, որոնք հիմնականում պահպանվել են եւ հիմք են տալիս որոշակիորեն նշելու, որ այստեղ դարեր շարունակ մեծաթիվ միաբանության ուխտ է եղել (տես Բ. Ուլուբաբյան, Դադի կամ Խուֆավանք, «Էջմիածին», 1971, 2–է, էջ 63): «Արարատ» ամսագրում գրված է. «Թադէի վանքը շրջակայ շինութիւններով նմանում է մարդաշատ քաղաքի մի հարուստ թաղի, որտեղ միայն մարդկանց ներկայութիւնն է շունչ եւ կենդանութիւն տալիս» («Արարատ», 1896, էջ 42):

Ժամանակին վանքը կողոպտել են պարսիկները, ապա՝ արաբները, սելջուկները, հետագայում՝ օսմանյան թուրքերը, եւ կրկին պարսիկները: Ավելին՝ դարերի փորձությունների միջով անցած վանքը ժեղարից սկսյալ հետզհետե զրկվել է իր հարստություններից եւ, որ ամենից ողբերգականն է, շրջակա տասնյակ հայկական գյուղերից (բնակչությունը բռնագաղթեց-

վում է Պարսկաստանի խորքերը), նույնիսկ՝ սպասարկողներից: Դա է պատճառը, որ Սարգիս արք. Ջալալյանը ժժ դարի մոտավորապես կեսին անբնակ եւ խարխուլ տեսավ Դադիվանքը. «Այնքան տեղիք դարան են աւազակաց եւ ասպատակաց Արցախ նահանգի...», եւ նրանք հնավանդ սրբարաններում պահում էին «գիտստ խաշանց իւրոց եւ զոկս անասնոց»: Սարգիս արք. Ջալալյանը նաեւ վկայում է. «Ձառաջեալ մառանաց եւ սենեկաց են լայնատարած այգիք արդէն աւերակք, միայն մրգաբեր ծառք վայրենացեալք դեռեաւ աճեն եւ բազմանան...» (Սարգիս արք. Ջալալեանց, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Բ, Տփլիս, 1858, էջ 222–225):

Դադիվանքն անկրկնելի է իր շենքերի եւ շինությունների բազմազանությամբ, եկեղեցական ու աշխարհիկ մոտիվներով արված անչափ մուրբ խորաքանդակների, բարձրաքանդակների եւ վիմագրերի առատությամբ:

Վանական համալիրը գրեթե բաժանված է երկու մասի՝ պարսպից ներս գտնվող

ՅԱԿՈԲ ՊԱՏՐԻԱՐԺ ՆԱԼԵԱՆ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՈՒՍԱՆԵԼԻ

ԳԼՈՒԽ Ա

Ի՞նչ է Քրիստոնեական ուսանելին

Առաջին հարցում.
Քրիստոնեական ուսանելին այն է, որ ընդգրկում է քրիստոնեայ մարդուն անհրաժեշտ եղող բոլոր կենսական ուսանելիքները. այդ պատճառով այս գրքով կը «Քրիստոնեական ուսանելի» կոչուեցաւ, որ փափաքողներուն կը սորվեցնէ փրկութեան համար անհրաժեշտ բաները:

Երկրորդ հարցում. *Քրիստոնեական անունին մասին.*

Քրիստոնեայ անունը Քրիստոսին հաւատացողին, պաշտողին ու երկրպագողին կը տրուի, ինչպէս նաեւ Քրիստոսի մահուամբ մկրտողին՝ յանուն Ամենասուրբ Երրորդութեան եւ մէկ աստուածութեան:

Տակաւին, քրիստոնեայ անունն այն ցոյց կու տայ, թէ քրիստոնեան Սուրբ Աւետարանին հաւատացող է, անոր սուրբ եւ նոր օրէնքներուն հնազանդ է եւ քրիստոսունակ է, այսինքն՝ Քրիստոս Աստուածը կրող իր հոգիին մէջ: Նաեւ, ինչպէս Քրիստոս բնութեամբ օծեալ կ'ըսուի, քրիստոնեան ալ շնորհքով:

Ա՛ն է հաւատքով բարի քրիստոնեայ, Որ գործով Քրիստոսի ծառայ կ'ըլլայ:

Երրորդ հարցում. *Ի՞նչո՞ւ առաքելները նոր հաւատացեալներուն անունը քրիստոնեայ կոչեցին եւ ո՞չ թէ յիսուսեան կամ աստուծապաշտ.*

Պատասխան. Իմացի՛ր, ի՞նչ ճշմարտութեան որդի, թէ *Յիսուս* անունը *փրկիչ* կը թարգմանուի հրեաներուն լեզուով, իսկ *Քրիստոս* անունն *օծեալ* կը թարգմանուի հելլեններու լեզուով. իսկ աստուծապաշտ անունը՝ Աստուծոյ իւրաքանչիւր հաւատացողի համար կ'ըսուի, որ կը ճանչնայ

միայն, թէ Աստուած կայ: Սակայն քրիստոնեայ կը թարգմանուի Օծեալին, այսինքն՝ Քրիստոսի աշակերտ. օծուած՝ Ասագանին շնորհիւ ու սրբալոյս միւռոնով՝ դրոշմուելով ի նշան Աստուծոյ որդեգրութեան:

Որովհետեւ ինչպէս Քրիստոս աստուածութեան բնութեամբ առած մարդկութիւնն օծեց եւ Օծեալ կոչուեցաւ, այդպէս ալ իւրաքանչիւր հաւատացեալ, որ կը հաւատայ Քրիստոսի մարդեղութեան, քրիստոնեայ կը կոչուի, այսինքն՝ օծութիւն ունեցող, ինչպէս Պետրոս առաքեալ (այս մտածումը Յովհաննէս առաքեալն ունի եւ ոչ թէ Պետրոս առաքեալը. տես Ա Յով. Բ 20.— Վ. Բ.) կ'ըսէ, թէ դուք Սուրբն ունիք օծութիւնը: Ինչպէս Աբրահամի որդիներն ըստ մարմինի իսրայէլացիներ կոչուեցան Յակոբ Նահապետին աստուածատեւութեան պատճառով, այսպէս ալ Աբրահամի հաւատքով որդիները՝ նոր աստուածապաշտները, քրիստոնեաներ կը կոչուին:

Դարձեալ՝ ինչպէս Բանն Աստուած, Սուրբ Կոյս Մարիամ Աստուածածինի արգանդին մէջ իջնելով ու մարմն առնելով, շնորհներու լիութեամբ օծուեցաւ Յոգիէն, այդպէս ալ մենք, երբ Սուրբ Ասագան կը մտնենք, Սուրբ Յոգիին շնորհներով կ'օծուինք, եւ բարկութեան որդիներ ըլլալէ կը դառնանք Աստուծոյ որդիներ եւ Քրիստոսի եղբայրներ:

Դարձեալ՝ ինչպէս Քրիստոս, որ Սուրբ Կոյսին արգանդին մէջ իջաւ՝ մարմն առնելու համար անորմէ, նոյն պահուն Օծեալ եւ Քրիստոս կոչուեցաւ եւ ոչ թէ մկրտութեան ժամանակ, ինչպէս ոմանք կ'ըսեն, քանի որ մկրտութեան ժամանակ Սուրբ Յոգին իջաւ Անոր վրայ, որպէսզի զինք յատարարէ Յիսուս՝ Աստուծոյ Որդի եւ ոչ թէ այդ ատեն մարդացաւ եւ Քրիստոս օծուեցաւ: Այսպէս ալ մենք, Ասագան մտնելով, իբրեւ թէ որովայն կը մտնենք եւ քրիստոնէութեան նոր անունը կը ժառանգենք: Դարձեալ՝ Քրիստոս խաչին վրայ Իր սուրբ արեամբ օծուեցաւ՝ իբրեւ նոր մկրտուելով

Իր արիւնով, ինչպէս ըսաւ, թէ՝ *մկրտութիւն մը ունիմ, որով պէտք է մկրտուիմ.* այսպէս ալ մենք Անոր սուրբ արեամբ սրբուեցանք Ադամի սկզբնական մեղքէն եւ քրիստոնեայ կոչուեցանք, որպէս թէ Անոր արեամբ մկրտուեցանք:

Փա՛նք տուր Աստուծոյ, որ քրիստոնեայ ես, եւ ոչ թէ անհաւատ եւ դեւերու ծառայ:

Չորրորդ հարցում. *Ի՞նչն է քրիստոնեային նշանը.*

Պատասխան. Քրիստոնեային նշանը՝ Քրիստոսի Սուրբ Խաչն է, որովհետեւ, ինչպէս Աստուած Աբրահամի որդիներուն թկաւորութեան նշանը տուաւ՝ զանոնք կռապաշտներէն զատելու համար, այդպէս ալ մեզ, որ հաւատքով Աբրահամի որդիներ կոչուեցանք, Քրիստոս Իր Սուրբ Խաչը որպէս նշան տուաւ մեր քրիստոնէութեան:

Տակաւին, ինչպէս բոլոր թագաւորները տեսակ-տեսակ նշաններ ունին ոսկի ու արծաթ դրամներու վրայ, ինչպէս նաեւ իրենց դրօշակին վրայ, այդպէս ալ թագաւորներուն թագաւորը՝ Քրիստոս՝ մեր Տէրը, քառաթէ Սուրբ Խաչը որպէս նշան ունի: Եւ ինչպէս մարմնաւոր թագաւորին նշանին երեւնալուն գողերն ու աւազակները կ'անհետանան ու թշնամիները կը հալածուին, այդպէս ալ Քրիստոսի՝ երկնաւոր Թագաւորին նշանէն գող սատանան եւ իր աւազակ դեւերը, որոնք Աստուծոյ թշնամիներն են, կը հալածուին: Որովհետեւ պատմութիւններուն մէջ գրուած է, թէ զՔրիստոս ուրաջողն ու չար Յովհաննոսը, որքան անտեն որ խաչն իր ծոցին մէջ կը կրէր, դեւերը չէին կրնար մօտենալ անոր, իսկ երբ դեւերուն խրատով խաչին նշանը ոտքին տակ դրաւ, Աստուած հեռացաւ Իրմէ, ու դեւերը տիրեցին նրա հոգիին վրայ եւ ուրանալ տուին Քրիստոսի հաւատքը:

Խաչին նշանը ճակատիդ դիր, եւ համարձակ ըսէ՝ Փրկիչին ծառայ եմ:

Հինգերորդ հարցում. *Ի՞նչպէ՞ս պէտք է տանինք Քրիստոսի Խաչը.*

Պատասխան. Քրիստոսի Խաչը սիրով պէտք է տանինք, ինչպէս որ Քրիստոս զայն Իր ուսին վրայ մինչեւ Սուրբ Գողգոթա տարաւ եւ մանկութենէն մինչեւ Իր մահը խաչին հետեւեցաւ: Երբ Գողգոթա բարձրացաւ, անոր [խաչին] վրայ պառկեցաւ՝ որպէս կակուղ անկողնի մը եւ ներքնակի մը վրայ: Այդպէս ալ մենք, պէտք չէ խաչէն կամ չարչարանքներէն փախչինք, այլ, ինչպէս սուրբ Պօղոսը կ'ըսէ, *մեր մարմինն իր կիրքերով ու ցանկութիւններով խաչ հանենք:* Արդարեւ, քրիստոնեային համար մեծ ամօթ է հեշտութիւններու, հաճոյքներու եւ զուարճութիւններու ցանկալ, երբ Քրիստոս խաչն ու չարչարանքները փափաքեցաւ, եւ այդպիսի քրիստոնեան Քրիստոսի խաչին թշնամի է:

Որովհետեւ Քրիստոս խաչին վրայ լեռնի եւ քացախ խմեց, աչքերով արտասուեցաւ, բերանով՝ Դօր աղօթեց եւ թշնամիներուն համար թողութիւն խնդրեց. ձեռքերով կախուեցաւ՝ խաչին վրայ գամով, իսկ ոտքը ծակուեցաւ, կողէն խոցուեցաւ, եւ թեզի մկրտութեան ջուր բխեց, իսկ պատարագի համար՝ արիւն, գլուխը փուշով պսակուեցաւ. որպէսզի դուն, ասոնց նայելով, աշխարհն ու մարմինդ չկամենաս սիրել, այլ քու սիրոյդ խաչուած Աստուածը՝ Յիսուս Քրիստոս. սակայն դուն, աշխարհն ու աշխարհի ցանկութիւնները սիրելով, Քրիստոսի խաչին եւ Անոր սուրբ չարչարանքներուն թշնամի եղար:

Ով որ խաչին փայտը չ'առնէր ու կամաւորաբար չարչարուիլ չի՞ ցանկար, Յիսուսի հետ բաժին չունի, որովհետեւ հոգիով մեռնիլ կը ցանկայ:

Շարունակելի

**Փոխադրութիւնը՝
Վարանդ (Յակոբ) Քորթմոսեանի**


հիմնական եւ պարսպից դուրս գտնվող հարավային՝ լրացուցիչ շինություններին: Հնագույն եկեղեցին կամ միանավ բազիլիկը գտնվում է համալիրի հյուսիսային կողմում՝ զառիթափին: Հյուսիսային պատն ամբողջովին, իսկ արեւելյանը մասամբ թաղված է հողի մէջ: Բավական ընդարձակ շինության թաղակապ տանիքը հենված է եղել պատերին կից երեքական կիսաայունների վրա: Հյուսիսային եւ հարավային պատերն ունեն որմնախորշեր, որոնք երիզված են սրբատաշ քարերով: Դռները՝ հատկապես արեւմտյանը, արտաքինից նույնպես քանդակազարդ են եւ առավել են ընդգծում բազիլիկի զուսպ հարդարանքը:

Երկրորդ եկեղեցին, որ դարձյալ հնագույններից է համարվում, հարավից կից է առաջինին: Այս եկեղեցին համեմատաբար ավելի նեղ է, ցածր, պատերին կից երկշարք երեքական որմնապուրակներ առաջինի նման կրկնված են: Պատերը եւս շարված են անտաշ քարով եւ ունեն սրբատաշ քարերով երիզված որմնադարաններ:

Եկեղեցու դահլիճը միջնորմով բաժանված է երկու հավասար մասի: Արեւմտյան սրահը, հավանաբար, հնուն ժամատան դէր է կատարել:

Մետրոպ Մագիստրոսը գրում է. «Ահաւասիկ այս երկու անշան շէնքերով, բնութեան տեսարաններից զուրկ մի անկիւնում, նշանաւոր վանքի համար շինութեան տեղ ընտրելը հիմք է տալիս կարծելու, թէ այդ տեղը շատ աւելի խոր հնութեամբ էր սրբագործւած, որ Արցախի մեծ իշխաններն ընտրեցին իբրեւ իրենց ընտանեկան գերեզմանատուն եւ ամեն տեսակ կայտածներով հարստացնելով՝ երկրի խոշորագոյն վանքերից մէկը դարձրին» (*Մետրոպ Մագիստրոս արք. Տէր-Մովսիսեան*, Հայկական երեք մեծ վանքերի՝ Տաթևի, Հաղարծնի եւ Դադի եկեղեցիները եւ վանական շինութիւնները, Երուսաղէմ, 1938, էջ 86):

Գավիթ-ժամատունը յուրահատուկ կառուց է. այն բովանդակւոյթամբ կիսաշխար-



հիկ, կիսակրոնական նշանակություն ունի, իսկ ճարտարապետական մտահղացմամբ եւ կառուցվածքային սկզբունքով առնչվում է հայկական ժողովրդական տներին (գլխատներ):

Գավիթ-ժամատուն կառուցողները, ճարտարապետական միասնական համալիր ստեղծելու նպատակից ելնելով, նախ անհրաժեշտ վերակառուցումների են ենթարկել հին բազիլիկները, հետո միայն կառուցել գավիթ-ժամատունը: Թերեւս դրանով կարելի է բացատրել գավթի արտաքին համեստ եւ զուսպ հարդարանքի ու ներսի ճոխության խիստ հակադրությունը: Դռան աջ կողմում գտնվող արձանագրությունից երևում է, որ այն 1224 թ. (ՈՂԴ) կառուցել է Գրիգորիս եպիսկոպոսը:

Գավթի ներսի պատերի մէջ ազուցված են բազմաթիվ խաչքարեր: Այդ առումով հատկանշական է արեւելյան պատը, որի մեջտեղում կողք կողքի շարված ինը խաչքար կա: Փոքրածավալ այս կոթողները պատված են նուրբ, գեղեցիկ ժանկազարդ քանդակներով եւ նվիրատվական արձանագրություններով: Գավիթ-ժամատունը դարեր շարունակ եղել է Վերին Խաչենի իշխանական տոհմի տապանատունը: Ներսից հատակը

ծածկված է գերեզմանաքարերով, որոնց տապանագրերի մի մասն արդեն ջնջված է:

Արզու-խաթուն կաթողիկէ եկեղեցին Դադիվանքի համակառուցի մեջ առանձնանում է որպէս մի հոյակերտ հուշարձան: ԺԳ դարի հայկական ճարտարապետության նշանավոր եւ հայտնի այս կոթողը գտնվում է վանական համալիրի արեւելյան մասում՝ դէպի խոր ձորն իջնող դարավանդի եզրին:

Վանական եւ աշխարհիկ երկշարք շէնքերի միջով, պարսպի գլխավոր դարպասից մինչեւ կաթողիկէն ձգվում է մի լայն ու երկար միջանցք, որը գրականության մեջ ընդունված է անվանել «պողոտա» (տես *Մետրոպ Մագիստրոս արք. Տէր-Մովսիսեան*, Հայկական երեք մեծ վանքերի՝ Տաթևի, Հաղարծնի եւ Դադի եկեղեցիները եւ վանական շինությունները, էջ 89):

Եկեղեցին հիմնադրվել է 1214 թ. Հաթերքի մեծ իշխան Վախթանգի բարեպաշտ տիկնոջ՝ Արզու-խաթունի ջանքերով (տես *Օ. Մարգարյան*, Կառուցել են կանայք, Երեւան, 2011, էջ 39): Կաթողիկէի ներսի կիսապուրակն ու դրանք կապող կամարները սպիտակ եւ գորշ քարերից են՝ զարդարված նուրբ քանդակներով: Ներսի պատերի

ծեփը, որը տեղ-տեղ ավերված է, ճաքճած, ծածկված է վատ պահպանված որմնանկարներով: Առ այսօր մնացած նկարներից երևում են հայկական որմնանկարչության ավանդական գծերը՝ գույների առատություն, նկարելու պարզ եղանակ, նախազգարդման սեր, վառ արտահայտված արեւելյան տիպի դեմքի պատկերում (տես *Մ. Դւրնովո*, Очерки изобразительного искусства средневековой Армении, Москва, 1979, էջ 153—154): Դրանց կատարելությունը վկայում է, որ միջնադարյան Արցախում ստեղծագործել են հրաշալի վարպետներ. նրանք ոչ միայն գերազանց տիրապետել են պատերը նկարազարդելու, այլ նաեւ ձեռագրերը գունավոր մանրանկարներով պատկերազարդելու արվեստին:

Եկեղեցին առավել ուշագրավ է դրսից: Քարերի բազմագույն եւ արժեքավոր տեսակները, դրանց խիստ ողորկ մշակումն ու միակցումը, ճարտարապետական ձեւերի մտածված ու խելացի լուծումը, կառուցողական բարձր արվեստը, գեղազարդային (դէկորատիվ) պատկերաբանականները կաթողիկէն դարձրել են համալիրի զարդը:

Չանգակատունը գտնվում է համալիրի արեւմտյան մասում՝ դարպասի դիմաց: Երկհարկանի շինությունը կառուցվել է ԺԳ դարի կեսին՝ Դովյանց Վահրամ իշխանի որդի Սարգիս եպիսկոպոսի ջանքերով: Այն սկզբում առանձին շինություն էր. ներսում տեղադրված է երկու հոյակերտ խաչքար՝ 1283 թվագրությամբ: Չանգակատան բարձրությունը 14,6 մ է, որից 6 մ 2-րդ հարկն է, ռոտոնդան՝ սրածայր վեղարով: Խաչքարերը պատկանում են համալիրի ամենափառավոր կոթողների թվին: Դադիվանքը ճարտարապետական մի յուրօրինակ դպրոց է, որտեղ ընդհանրացված են հայ բազմադարյան ճարտարապետության լավագույն ավանդույթները (*Ա. Բարսեղյան*, Արցախի վանքերը, Ստեփանակերտ, 2011, էջ 58):

Եմմա ՂԱԶԱՐՅԱՆ



ՇՈՒՐԻՉԿԱՆՆԻ ԱՎԵՏԱՐԱՆ

Նայ ժողովուրդը քրիստոնեության ընդունումից ի վեր առաձնակի խնամքով եւ բարեպաշտությամբ է վերաբերվել ձեռագրերին՝ հատկապես Աստվածաշնչին եւ «Նաբեկ» աղոթագրքին: Անկախ ուսյալ կամ անկիրթ լինելուց՝ տարբեր գերդաստաններ եւ ընտանիքներ տանն Աստվածաշունչ են ունեցել:

Պահվող ձեռագրերը կիրառվել են (առ այսօր կիրառվում են) ոչ միայն ընթերցելու համար, այլ նաեւ որպէս սրբություն, որին դիմել են զանազան խնդրանքներով՝ փորձանքից ազատվելու, չարից պաշտպանվելու, հիվանդություններից բժշկվելու, զավակ ունենալու եւ այլ խնդիրների դեպքում: Հայտնի է, որ բազմաթիվ ձեռագիր մատյաններ գաղթի ժամանակ բերվել են Արեւմտյան Հայաստանի, Պարսկաստանի տարբեր գավառներից եւ պահպանվել Արեւելյան Հայաստանում:

Հրաշագործ եւ խնդրակատար ավետարաններից է Շուրիչկանի Ավետարանը:

«Ս. Բարսեղ Կեսարացի» կամ Շուրիչկանի Ավետարանը գրվել է 1498 թվականի փետրվարի 5-ին (երբ տանուտերը խոյն էր) Քաջբերունի գավառի Ասպիսնակ գյուղում (Թ. Գետրոյան, Շուրիչկանի Ավետարանի գործառնությունը պարսկահայերի ավանդական կենցաղում, «Հայոց սրբերը եւ սրբավայրերը, ակունքները, տիպերը, պաշտամունքը» (հոգվածների ժողովածու), Երեւան, 2001, էջ 411): Շուրիչկանի Ավետարանի պատվիրատուն է Թուրվանդան. նա Բարսեղ քահանային խնդրել է ընդօրինակել այս Ավետարանը: Մեզ հասած ավանդություններից մեկի համաձայն՝ այն ընդօրինակել է Ս. Բարսեղ Կեսարացին: Սակայն այս վարկածը ստույգ չէ եւ չի համապատասխանում իրականությանը (տես Գ. Տեր-Վարդանեան, Շուրիչկանի Ավետարանը, Երեւան, 2017, էջ 36–37): Շուրիչկանի Ավետարանը գրված է բոլորագրով, բաղկացած է 322 թերթից, չափերը՝ 18x13 սմ, ունի 3 մանրանկար, բազմաթիվ կիսախորանավանդաթերթեր եւ լուսանցագրեր: Սովորաբար կազմը կաշեպատ է՝ արծաթե բարձրաքանդակ ականակուռ կրկնակազմով, որի աստառը թղթից եւ մետաքսից է:

Այս ձեռագիրը բազմաթիվ այլ ձեռագրերի մեծ անցել է բռնագողթի ճանապարհ: 1603–1604 թթ. Շահ Աբասի արշավանքների հետեւանքով բռնագողթի ճանապարհ անցած հայերից էր տեր Գրիգոր քահանան, որը փրկել է ձեռագիրը եւ տարել Պարսկաստանի Փերիա գավառի Շուրիչկան գյուղ: Տեր հայրը, մինչեւ տեղ հասնելը, Ավետարանը հաց ու պանրի հետ միասին պահել է իր մեջքին՝

այծի մորթուց պատրաստված անջրանցիկ տիկի մեջ: Տեղ հասնելուց հետո սկզբնական շրջանում Ավետարանը պահվել է երբեմն հոգեւորականների, երբեմն՝ գյուղի ավագանու տանը: Այդ տները սուրբ են համարվել, իսկ պահողները կոչվել են «տեարք Աւետարանի»: Նրանք իրենց անունները կնիքի տեսքով հաստատել են Ավետարանի վրա: Ձեռագիրն ունի պատկանելություն հաստատող գիր, որը պարսկերեն է՝ գրված 1794 թ. Նոր Ջուղայում: Երբ Ավետարանը պահվել է մասնավոր ընտանիքներում, հաճախ վեճերի էլ անհնազանդությունների պատճառ է դարձել. այս առնչությամբ մի շարք համաձայնագրեր են կնքվել եւ ստորագրվել: Այդ փաստաթղթերից մի մասը չի պահպանվել: Վեճերը լուծելու միակ տարբերակը եղել այն, որ տեղի առաջնորդը նամակ է գրել Ավետարանի նվիրատուներին, որ այլեւս որեւէ ընծա չուղարկեն Շուրիչկանի Ավետարանին (տես «Հասկ» պաշտօնական ամսագիր Կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ, կրօնական, կրթական, գրական եւ բանասիրական, 1966, թիւ 1, Յունուար, Լե. տարի, էջ 14): Այն համարվել է Փերիայի ամենահռչակավոր ձեռագիրը, որի համբավը տարածվել էլ եւ հասել է նույնիսկ մինչեւ Հնդկաստան: Տարբեր վայրերից ոչ միայն հայեր, նաեւ մահմեդականներ են ուխտի գնացել Շուրիչկանի Ավետարանին՝ հավատալով նրա հրաշագործ եւ խնդրակատար զորությանը. նրանց հավատը մեծ է եղել Ավետարանի նկատմամբ: Հնում, երբ դեռ չէր բացվել Փերիայի հիվանդանոցը, մեծ թվով հիվանդներ են եկել՝ Ավետարանի զորությամբ բժշկվելու եւ ապաքինվելով՝ հետ են վերադարձել իրենց բնակավայրերը (տես Լ. Միմասեան, Պատմություն Փերիայի հայերի, Ամթիլիաս–Լիբանան, 1971, էջ 311–312):

Ձեռագրի հրաշագործությունների վերաբերյալ մեզ են հասել բազմաթիվ պատմություններ՝ սկսած Ավետարանի փրկության ավանդությունից: Վանեցիները տեսնելով, որ Շուրիչկան գյուղի բնակիչները ենթարկվում են հալածանքների, որոշում են քոչվորներից թաքցնել սրբությունը: Նրանք Ավետարանը թաղում են Ս. Բարսեղ Կեսարացու վանքի տարածքում՝ հողի տակ, որտեղ սրբությունը մնում է յոթ տարի: Երբ համոզվում են, որ վտանգն անցել է, գնում են ձեռագիրը հանելու եւ տեսնում են՝ այնտեղ, որտեղ թաքցված է եղել Ավետարանը, աղբյուր է գոյացել, եւ ջուր է

հորդում: Մարդիկ վկայում են, որ այդ ջուրը բուժիչ եւ զորավոր էր: Փաստորեն՝ ձեռագիրը յոթ տարի մնացել էր ջրի տակ, սակայն, ի զարմանս շուրիչկանցիների, Ավետարանը պահպանվել էր անվնաս: Հետագայում այդ վայրը կոչվել է Պապի աղբյուր: Բազմիցս ցանկացել են Ավետարանը գողանալ, սակայն չեն կարողացել. գողության փորձ անողը պատժվել է: Միայն մեկ անգամ կարողացել են կազմել գողանալ. հետագայում մի պարսիկ կազմ է նվիրաբերել Ավետարանին՝ որպէս շնորհակալություն իր որդու բժշկության համար: Շուրիչկանի Ավետարանի զորությամբ անպտուղ կանայք երեխա են ունեցել. նրանցից ոմանք իրենց զավակների մագերթ չեն կտրել, եւ նրանք ողջ կյանքում ծառայել են Ավետարանին: Շուրիչկանի Ավետարանի զորությամբ հոգեկան հիվանդություններ են բժշկվել, երաշտն ու համաճարակն են դադարել: Հինգ հարյուր եւ ավելի տարի Պարսկաստանում գտնվելուց հետո՝ 1973 թ., ձեռագիրը հանգրվանել է Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում:

Մինչեւ 2002 թ. միայն շուրիչկանցիներն էին գալիս Մաշտոցի անվան Մատենադարան եւ սրբությանն իրենց ուխտը կատարում. Մեսրոպ արք. Աշոցիյանի աջակցությամբ Շուրիչկանի Ավետարանը Մատենադարանից առաջին անգամ դուրս է բերվում եւ տարվում է Ուշիի Ս. Սարգիս վանք: Այնտեղ այցելելը, սակայն, անհարմար էր ուխտավորներին: Ավետարանը տեղափոխում են Մուղնի գյուղի Ս. Գետրոգ եկեղեցի: Այդուհետ ավանդույթ է ձեւավորվում. Սուրբ Հարության տոնի հաջորդ կիրակի ձեռագիրը տանում են Մուղնի եւ հավատավորներին հաղորդ դարձնում սրբությանը:

Կրկնագատիկ օրը Մուղնիում վերածվում է մեծ տոնակատարության, որին մասնակցում են հազարավոր ուխտավորներ ոչ միայն Հայաստանի տարբեր համայնքներից, այլ նաեւ Պարսկաստանից եւ արտերկրից: Ուխտի պատրաստությունն սկսում են դեռ նախորդ օրվանից: Հավատացյալները հոգեւորականների հետ ողջ գիշեր մնում են վանքում եւ իսկում կատարում. առավոտյան ուղեւորվում են Մատենադարան եւ այնտեղից Ավետարանը բերում Մուղնի:

Տարիներ շարունակ այդ օրը Մուղնիում հարիսա են բաժանում հավատավորներին: Այս ավանդույթը եւս կապված է Ավետարանի հրաշագործության հետ: Շուրիչկան

կան գյուղում բնակվող մի կին ունենում է երեք որդի եւ մեկ դուստր: Նրա որդիներն առանց պատճառի մահանում են. նրա դուստրը ամուսնանում է, սակայն զավակ չի ունենում: Լսած լինելով ձեռագրի սրբության եւ որդեստոր զորության մասին՝ մայր եւ դուստր բոկոտն ուխտի են գալիս Շուրիչկանի Ավետարանին, որից հետո աղջիկը որդի է ունենում: Երեխային անվանակոչում են Ապրես: Ապրեսը ներկայումս բնակվում է ԱՄՆ-ում, եւ ամեն տարի՝ Շուրիչկանի ուխտի օրը, նրա հովանավորությամբ հարիսա է բաժանվում ուխտավորներին: Այդ օրը մարդիկ մատաղ են անում՝ հավատալով, որ Ավետարանի զորությամբ

իրենց խնդրանքն Աստծուն կհասնի:

Շուրիչկանի Ավետարանի պաշտամունքն այնքան մեծ է եղել, որ բազմաթիվ գովերգեր են նվիրվել ձեռագրին.

Շուրիչկան լույսի փաթախտա ա,
Սուրբ ճառագայթ ամեն վախտա ա,
Չորությունը չարին յարթա,
Շուրիչկանանց Ավետարան:
Չորավար հանճար արեգակ,
Լուսապայծառ ամեն տեսակ.
Չորքերդ բարի իրեշտակ,
Շուրիչկանանց Ավետարան:


Գոհարիկ ՂԱԶԱՐՅԱՆ

Զմրուխտ վազերի սգերգը

Սկիզբը՝ 2022-ի թիվ 14–16, 2023-ի թիվ 5

Քառասունհինգ օր հետո, երբ Գեղամը հայրենի բնօրան հասավ, գյուղի վրա մթնշաղ էր իջել: Երկհարկանի, գեղեցիկ ոճով մի հույաշեն շենք էր տիրակալորեն բարձրացել գյուղամիջում: Դժվար չէր կռահել՝ նորակառույցը մշակույթի տունն է, որի սրբատաշ վարդակարմիր տուֆ քարերն էլ հենց իրենց «Քարխան» («Քարհանք») թաղամասից են բերվել: Նայեց, ժպտաց ու շարժվեց: Ուղիղ ձգվող նորաբաց լայնահուն կողոցով նրա խրոխտ քայլերն ամեն վայրկյան մոտեցնում էին տանը: Տոն, օջախ հարազատ, հայրենի... Քանի միլիոն վայրկյան է նա փափագել ընծալի այս պահը... Սիրտը տվախում է անհամբեր...

Էլեկտրասյունից կախված լամպի լույսով դրկիցները քիչ հեռվից տեսան, որ ճերմակահեղ, միջին տարիքի մի մարդ վստահաքայլ մոտեցավ հանդիպակաց տանը, վայր դրեց ճամպուրկն ու իրերը,



ազատեց ձեռքերը: Հաջորդ վայրկյանին հանեց գլխարկը, հայացքն ու ձեռքերը հավատացյալի ջերմեռանդությամբ երկինք ուղղեց մի պահ, ապա ծնկեց, համբուրեց տան շենքը ու նոր միայն հրեց, բացեց մուտքի դուռը:

Նորեկին դրկիցներից առաջինը ճանաչեց Կալեի Արտաշը:

– Բայ, ժողովուրդ ջան, էդ հո մեր Քեղամն էր... Այ ես Աստուռ ոտի տակը պաչեմ, որ մարդուն ողջ-առողջ իրա տունը պերավ,– զգացված արտաբերեց նա, եւ ինքն էլ մյուսների պես շատ կուզեր ուրախության ծափ զարկել, սակայն... Հուններ երկրորդ ձեռքը... Իր սեւ հումորով «էն իրեշ Դիտլերը կուլ տվավ»...

Երբ հարեւանները հախտուն «ներխուժեցին» Գեղամի տուն, նրան տեսան երանություն մեջ՝ Գոհար եւ Գետրոգ թոռնիկներին կրծքին սեղմած, աշխարհը մոռացած...

– Գալո բարի, Քեղամ, չարչարանքդ՝ ապաշխարանք,– մոտենում, աչքալուսամքի խոսքերի հետ ասում էին նրանք:

Թաղեցիք երեկ էլ կարոտով դիմավորեցին Սիբիրի Ալթայի երկրամաս աքսորված Մաքսատ Սարդարյանի բազմամյա ընտանիքին:

1930-ականներին եւ 1949 թվականի

հունիսի 14-ին բռնադատվածներն ամենուրեք, ինչպես զարմանը տաք հարավից վերադարձած թռչուններն են եռանդով նորոգում իրենց բզիկ-բզիկ եղած բները, ցուրտ Սիբիրից հայրենիք եկած տարագրյալներն էլ վերստին մոր կյանք բերեցին իրենց թափուր տներին, եւ զանգուրվող քուլաներով կրկին խաղաղ ծխացին հանգած ակունքները...

Ոսկեվազ գյուղը նույնպես գրկաբաց ընդունեց իր տարաբախտ զավակներին: Կարեկից, գորովագուր մարդիկ, որոնց պակասը, ի դեպ, բնավ չունի մեր ժողովուրդը, նրանց սատարում էին նախ հոգեպես, ապա ով ինչով կարող էր, օգնում-օժանդակում նյութապես՝ սկսած հասարակ թել ու անեղից մինչեւ նրանց համար կարկոզ գերանացու սլացիկ բարդիները: Որդու հետ թեւ-թիկունքի՝ Գեղամն էլ սկսեց երկհարկանի մոր տան կառուցումը:

Խզված, խաթարված կյանքն իր արդար հունն էր դառնում նորովի... ➔ էջ 8

ԴՄԻՏՐԻ ԼԻՍԱՋՈՎ ՆԱՄԱԿՆԵՐ ԲԱՐՈՒ ՄԱՍԻՆ

Սկիզբը՝ 2022-ի թիվ 19—2023-ի թիվ 8



Նամակ երեսունչորսերորդ ՈՌԻՍԱԿԱՆ ԲՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Բնությունն իր մշակույթն ունի: Քառսն ամենեւին էլ բնության բնական վիճակը չէ: Ընդհակառակը՝ քառսը (եթե միայն այն առհասարակ գոյություն ունի) բնության ամբնական վիճակն է:

Իսկ ինչպե՞ս է արտահայտվում բնության մշակույթը: Եկեք խոսենք կենդանի բնության մասին: Ամենից առաջ այն ապրում է հասարակությամբ, համակեցությամբ: Գոյություն ունեն «բուսային միություններ»... ծառերը խառնիխուռն չեն ապրում, այլ որոշակի տեսակներ համատեղվում են ուրիշ տեսակների հետ, բայց ամենեւին ոչ բոլորի հետ: Օրինակ՝ սոճիները որպես հարեան ունեն որոշակի քարաքոսեր, մամուռներ, սնկեր, թփեր եւ այլն: Դա գիտի յուրաքանչյուր սունկ հավաքող: Վարքագծի որոշ կանոններ բնորոշ են ոչ միայն կենդանիներին (սրան ծանոթ են բոլոր շնապահները, կատվասերները, նույնիսկ բնությունից դուրս՝ քաղաքում բնակվողները), այլ նաեւ բույսերին: Ծառերը տարբեր ձեւերով են ձգվում դեպի արեւը՝ երբեմն կատարներով, որպեսզի չխանգարեն միմյանց, իսկ երբեմն էլ՝ ճյուղատարած, որ ծածկեն եւ պաշտպանեն իրենց հովանու տակ աճել սկսող մեկ այլ ծառատեսակի: Լաստենու հովանու տակ է աճում սոճին: Սոճին կաճի, եւ այդ ժամանակ կմեռնի իր գործն արած լաստենին: Ես այդ երկարամյա գործընթացը դիտել եմ Պետերբուրգի մոտ գտնվող Տոկսով ավանում, որտեղ Առաջին աշխարհամարտի ժամանակ բոլոր սոճիները հատվեցին, եւ սոճու անտառներին փոխարինեցին լաստենու մացառուտները, որոնք այնուհետեւ իրենց ճյուղերի տակ փայփայեցին մատղաշ սոճիներին: Այժմ այնտեղ կրկին սոճիներ են աճում:

Բնությունը յուրովի «հասարակական» է: Դրա «հասարակականությունը» նաեւ այն է, որ կարող է ապրել մարդու կողքին՝ հարեանակցել նրան, եթե վերջինս էլ իր հերթին հասարակական է ու մտավոր զարգացած, պահպանում է այն, անուղղելի վնաս չի հասցնում, անտառները մինչեւ վերջ չի հատում, չի աղբոսում գետերը...

Ռուս գյուղացին իր դարավոր աշխատանքով կերտում էր ռուսական բնության գեղեցկությունը: Նա հերկում էր հողը եւ ըստ այդմ՝ որոշակի չափեր տալիս դրան: Նա չափ էր դնում իր վարելահողին՝ գութանով անցնելով դրա վրայով: Ռուսական բնության սահմանները համաչափ են մարդու եւ նրա ձիու աշխատանքին, նրա արորի կամ գութանի հետեւից ձիու հետ գնալու կարողունակությամբ՝ նախքան հետ դառնալը, ապա կրկին առաջ շարժվելը: Հարթեցնելով հողը՝ մարդը հանեց դրա

միջի բոլոր սուր եզրերը, թմբերը, քարերը: Ռուսական բնությունը մեղմ է. գյուղացին այն յուրովի է խնամել: Գութանի, արորի, տափանի հետեւից գյուղացու քայլելն ստեղծում էր ոչ միայն տարեկանի ցանքաշերտեր, այլ նաեւ հավասարեցնում էր անտառի սահմանները, ձեւավորում նրա եզրերը, ստեղծում սահուն անցումներ՝ անտառից դաշտ, դաշտից գետ:

Հողագործի աշխատանքով բնության վե-



րափոխման քնարերգությունը շատ լավ է արտահայտել Ա. Կոցովը «Հողագործի երգում», որն սկսվում է գորշուկ ձիու շտապեցմամբ.

*Քաշիր, իմ ձի, քաշիր,
Վարենք ժամանակին,
Թող հողի մեջ խոնավ
հուփը փայլատակի*
(թարգմ.՝ Վ. Հարությունյանի):

Ռուսական բնապատկերը հիմնականում ստեղծվել է երկու մեծ մշակույթների ջանքերով. մարդու մշակույթի, որը մեղմացրել է բնության խստությունները, եւ բնության մշակույթի, որն իր հերթին մեղմացրել է հավասարակշռության բոլոր խախտումները, որոնք ակամայից ներմուծել է մարդը: Բնատեսարանը մի կողմից ստեղծել է բնությունը՝ պատրաստ յուրացնելու եւ քողարկելու այն ամենը, ինչն այսպես թե այնպես խախտել է մարդը, մյուս կողմից՝ մարդը՝ իր աշխատանքով հողը փխրեցրած եւ մեղմացրած բնատեսարանը: Երկու մշակույթներն էլ կաճեւ թե սրբագրել են միմյանց եւ ստեղծել նրա մարդկայնությունն ու լայնարձակությունը:

Արեւելավորոպական հարթավայրի բնությունը մեղմ է՝ առանց բարձր լեռների, սակայն ոչ անգոր հարթ, գետերի ցանցով՝ պատրաստ «հաղորդակցման ճանապարհներ» դառնալու, եւ երկնքով, չծածկված թավ անտառներով, զառիվայր բլուրներով եւ սահունորեն բոլոր բարձրությունները շրջանցող անվերջանալի ճանապարհներով:

Եվ ինչպիսի խնամքոտությամբ է մարդը հարթել բլուրները, վայրէջքներն ու վերելքները: Այստեղ հողագործի փորձառությունն ստեղծել է զուգահեռ գծերի գեղագիտություն. գծերի՝ միմյանց եւ բնության հետ ներդաշնակ գնացող, ճիշտ ինչպես հին ռուսական երգեցողության մեղեդիները: Հողագործն ակոսին զուգահեռ ակոս էր գցում, ինչպես սանրում, հարմարեցնում էր մազը մազի կողքին: Այդպես է խրճիթ կառուցելիս դրվում գերանը գերանին, կոճղը՝ կոճղին, ցանկապատ շինելիս ձողը՝ ձողի վրա, իսկ իրենք դասավորվում են համաչափ շարքով՝ գետի վերելում կամ ճանապարհի երկայնքով, ինչպես ջուր խմելու դուրս եկած մախիրը:

Ուստի բնության եւ մարդու հարաբերությունը երկու մշակույթների հարաբերություն է, որոնցից ամեն մեկը յուրովի «հասարակական», համակեց է, ունի իր «վարքի կանոնները»: Եվ նրանց հանդիպումը կառուցվում է յուրօրինակ բարոյական հիմքերի վրա: Երկու մշակույթներն էլ պատմական զարգացման արգասիք են, ընդ որում՝ մարդկային մշակույթի զարգացումը վաղուց ի վեր ընթանում է բնության ազդեցության ներքո (այն ժամանակվանից, ինչ գոյություն ունի մարդկությունը), իսկ բնության զարգացումը՝ իր բազմամիլիոնավոր տարիների գոյությամբ, մարդկային մշակույթի ազդեցության տակ համեմատաբար նոր եւ ոչ ամենուր է: Մեկը

րը: Այս մակերեսութապատկերի ողջ ոգին ներծծված է դարավորի զգացումով: Եվ պատահական չէր, որ այստեղ սերնդեսերունդ ապրել է ասացող Ռյաբինիների ընտանիքը, որից բազմաթիվ բիլինաներ են գրի առնվել:

Ռուսաստանի բնատեսարանն իր հսկայական ողջ տարածությամբ կարծես թե բաբախում է, այն մեկ պարավում եւ դառնում է առավել բնական, մեկ՝ խտանում գյուղերում, պոզոստներում (գյուղական շրջան Հին Ռուսիայում) ու քաղաքներում. դառնում ավելի մարդկային:

Գյուղում եւ քաղաքում շարունակվում է զուգահեռ գծերի հենց նույն համաչափությունը, որն սկսվում է վարելահողից: Ակոսը՝ ակոսին, գերանը՝ գերանին, փողոցը՝ փողոցին: Մեծ համաչափ բաժանումները զուգակցվում են փոքրի՝ մասնատվածի հետ: Մեկը սահուն անցնում է մյուսին:

Հիմնական քաղաքը չի հակադրվում բնությանը: Այն դեպի բնություն է գնում արվարձանով: «Ռուրոբոդ»-ը (արվարձան, որս-մոտ, քոբոդ-քաղաք) կարծես միտումնավոր ստեղծված բառ է, որպեսզի միավորի քաղաքի եւ բնության վերաբերյալ պատկերացումները: Արվարձանը քաղաքին կից է, բայց այն նաեւ բնությանն է կից: Արվարձանը գյուղ է ծառերով, փայտե կիսագյուղական տներով: Հարյուրամյակներ առաջ այն բանջարանոցներով ու այգիներով կապած էր քաղաքի պարիսպներին, հողապատնեշին եւ խանդակին, այն կապած էր նաեւ շրջակա դաշտերին ու անտառներին՝ դրանցից վերցնելով մի քիչ ծառեր, մի քիչ բանջարանոցներ, մի քիչ ջուր՝ իր լճակներին ու ջրհորների համար: Եվ այս ամենը մարգերի, փողոցների, տների, գերանիկների, սալարկների ու կամրջակների կոճղերի թաքնված եւ ակնհայտ համաչափությունների մակընթացությունների եւ տեղատվությունների մեջ:

Ռուսների համար բնությունը միշտ եղել է ազատություն, անկախություն, լայնարձակություն: Ոշադրություն դարձրեք լեզվին. ման գալ ազատության մեջ, դուրս գալ ազատություն: Ազատությունը վաղվա օրվա հոգսերի բացակայությունը, անհոգությունն է, երանելի ընկղմվածությունը ներկայի մեջ:

Հիշե՛ք Կոցովի բանաստեղծությունը.

*Այն, տափաստան իմ,
Ազատ տափաստան,
Լայն ու ընդարձակ
Ձգվել ես դեպի
Ափը Սեւ ծովի*

(«խոտհարը»,

թարգմ.՝ Վ. Հարությունյանի):

Կոցովը նույն հրճվածքն է ապրում լայնարձակության վիթխարիության առջեւ:

Լայնարձակ տարածությունը միշտ իշխել է ռուսների սրտերին: Այն փոխարկվել է հասկացությունների եւ պատկերացումների, որոնք չկան այլ լեզուներում: Ինչո՞ւ է, օրինակ, «воля»-ն տարբերվում «свобода»-ից. «воля»-ն ազատություն է՝ միացած լայնարձակության, որեւէ բանով չարգելափակված տարածության հետ: Իսկ անձկության հասկացությունը, ընդհակառակը, միացած է նեղվածության՝ մարդուն տարածությունից զրկելու հասկացության հետ: Մարդուն ճնշելը նշանակում է նրան տարածությունից զրկել՝ բառի ուղիղ եւ փոխաբերական իմաստով:

Ազատ լայնարձակություն: Այս ազատությունն զգացել են նույնիսկ բուռնակները (նավաքարշ բանվորներ), որոնք քայլում էին ափաշերտով, ինչպես ձիեր՝ լծված քարշաթոկին, իսկ երբեմն էլ՝ ձիերի հետ միասին: Քայլում էին ափաշերտով՝ ափամերձ նեղ արահետով, իսկ շուրջբոլորը նրանց համար ազատություն էր: Անազատ աշխատանք, իսկ շուրջբոլորը՝ ազատ բնություն: Իսկ մարդուն անհրաժեշտ էր մեծ, բաց, վիթխարի տեսադաշտով բնություն: Այս պատճառով է ժողովրդական երգում այդքան սիրելի դաշտիկ-դաշտը: ➡ էջ 8

ԴՄԻՏՐԻ ԼԻՍԱՋՈՎ ՆԱՄԱԿՆԵՐ ԲԱՐՈՒ ՄԱՍԻՆ



← էջ 7
Ազատությունը հսկայական տարածություն է, որով կարելի է քայլել ու քայլել, թափառել, լողալ մեծ զետեղի հոսանքներով եւ ընդ որում՝ մեծ հեռավորություններ, շնչել ազատության օդը՝ լայնարձակ տեղանքի օդը, լիակուրծք շնչել քամին, գլխավերելուս զգալ երկինքը, զանազան ուղղություններով շարժվելու հնարավորություն ունենալ, ինչպես կամքը տա:

Թե ինչ է ազատ լայնարձակությունը, լավագույնս սահմանված է ռուսական քնարական երգերում, հատկապես՝ ավագակային, որոնք, սակայն, ստեղծել ու երգել են ամենեւին ոչ ավագակները, այլ ազատություն եւ առավել լավ վիճակ անձկացող գյուղացիները: Այդ ավագակային երգերում գյուղացին երազում էր անհոգության եւ իրեն վիրավորողներին հատուցելու մասին: Քաջության՝ ռուսական հասկացությունը խիզախությունն է, իսկ խիզախությունը քաջություն է լայն շարժման մեջ: Դա քաջություն է՝ բազմապատկած տարածությամբ՝ այդ քաջությունն ի հայտ բերելու համար: Չի կարելի խիզախ լինել՝ քաջաբար նստելով ամրացված տեղում: «խիզախություն» (ռուս.՝ «уdauer») բառը շատ դժվար է թարգմանվում օտար լեզուներով: Անշարժ քաջությունն անհասկանալի էր

դեռեւս ժժ դարի առաջին կեսին: Գրիբո-դովը ծիծաղում է Սկալոզուբի վրա՝ նրա բերանը դնելով Ֆամուսովի այն հարցի պատասխանը, թե ինչ բանի համար «լամբակից կախ շքանշան ունի»:

Օգոստոսի երեքի առթիվ, երբ նստած մնացինք մենք խրամատում. Նրան հանձնվեց՝ վարդակապով, իսկ ինձ՝ զգիցս կախելու համար:

Ծիծաղելի է, ինչպես կարելի է «նստած մնալ», այն էլ «խրամատում», որտեղ արդեն իսկ շարժվելը բոլորովին անհնար է, եւ դրա համար մարտական պարգև ստանալ: Այո, եւ «подвиг» (սխրանք) բառի հիմքում նույնպես «թաղված» է շարժում. «подвиг», այսինքն՝ այն, ինչ արված է շարժմամբ, մղված ինչ-որ անշարժ բան տեղից շարժելու ցանկությամբ:

Յիշում եմ մանկության ժամանակ դիտած ռուսական պարը «Կովկաս եւ Մերկուրի» ընկերության վոլգյան շոգենավի վրա: Պարում էր բեռնակիրը (նրանց կենսաբեռնակիրներ էին անվանում): Նա պարում էր՝ տարբեր կողմեր դուրս ձգելով ձեռքերը, ոտքերը, եւ տարվածության մեջ գլխից պոկեց գլխարկը՝ հեռու մետելով այն ամբողջված հանդիսականների մեջ, եւ բղավում էր. «Կպատռվեմ, կպատռվեմ, ո՛հ

կպատռվեմ»: Նա ձգտում էր մարմնով որքան հնարավոր է մեծ տեղ զբաղեցնել:

Ռուսական քնարական ծորում երգի մեջ կա նաեւ լայնարձակության նկատմամբ կարոտ: Եվ այն լավագույնս երգվում է տնից դուրս՝ ազատության մեջ, դաշտում:

Ջանգերի դողամջը պետք է լսելի լիներ որքան հնարավոր է հեռվից: Եվ երբ զանգակատանը նոր զանգ էին կախում, մարդկանց միտումնավոր ուղարկում էին ունկնդրելու, թե քանի վերստից է այն լսելի:

Արագ վարելը նույնպես ձգտում է առ լայնարձակություն:

Բայց նույն առանձնահատուկ վերաբերմունքը լայնարձակության ու տարածության նկատմամբ տեսանելի է նաեւ բիլինամերում: Միկուկա Սեյյանինովիչը գնում է գութանի հետեւից՝ դաշտի մի ծայրից մյուսը: Վոլգային երեք օր է անհրաժեշտ լինում բովսարյան երիտասարդ հովատակներով նրան հասնելու համար:

*Մի մաճկալ տեսան արծակ դաշտի մեջ...
Գնացին մի օր մինչեւ իրիկուն
Ու չկարեցան հասնել մաճկալին,
Գնացին նրանք մյուս օրն ամբողջ,
Մյուս օրն ամբողջ՝ մինչեւ իրիկուն,
Ու չկարեցան հասնել մաճկալին...
Գնացին նրանք երրորդ օրն էլի,
Ու երրորդ օրը կեսօրից առաջ
Հասան մաճկալին արծակ դաշտի մեջ
(թարգմ.՝ Դ. Դավթյանի):*

Տարածության զգացումն առկա է նաեւ ռուսական բնությունը նկարագրող բիլինամերի նախերգերում, ինչպես նաեւ դյուցազունների ցանկություններում, օրինակ՝ Վոլգայի.

*Ամթիվ հունարներ իմացավ Վոլգան.
Գայլաձուկ դառնում, լողում էր Վոլգան
կապուտակ ծովում,
Բազե հավը դառնում, թռչում էր Վոլգան
ամպոտ երկնքում,
Գորշ գայլ էր դառնում, սուրում էր Վոլգան
արծակ դաշտերում
(թարգմ.՝ Դ. Դավթյանի):*

Կամ «Սոլովյե Բուդիմիրովիչի մասին» բիլինայի նախերգում.

*Բարձր է բարձրությունը երկնատակի,
Խորն է խորությունը օվկիանոս-ծովի,
Լայն են դաշտերը համայն երկրում,
Խորն են դնետարյան հորձանոտները...*

Նույնիսկ ապարանքների նկարագրության մեջ, որոնք Ջաբալա Պոստյատիչնայի այգում կառուցում է Սոլովյե Բուդիմիրովիչի քաջ գունդը, առկա է այդ իսկ հիացմունքը բնության վիթխարիության նկատմամբ:

*Ապարանքները լավ են զարդարված.
Արեւն է երկնքում՝ արեւն է ապարանքում.
Լուսինն է երկնքում՝ լուսինն է*

*ապարանքում.
Աստղերն են երկնքում՝ աստղերն են
ապարանքում.
Արշալուս է երկնքում՝ արշալույս է
ապարանքում,
Եվ անդ է համայն գեղեցկությունը
երկնաբարձուների:*

Լայնարձակ տարածությունների նկատմամբ հիացմունքն արդեն իսկ առկա է հինռուսական գրականության մեջ՝ Սկզբնական տարեգրության, «Աք Իգորի արշավանքի մասին», «Աք Ռուսաց երկրի կործանման մասին» երկերում, «Ալեքսանդր Նեսկուկ վարքում» եւ ժԱ-ԺԳ դարերի հնագույն ժամանակաշրջանի գրեթե բոլոր ստեղծագործություններում: Ամենուր իրադարձությունները կամ ընդգրկում են վիթխարի տարածքներ, ինչպես «Աք Իգորի արշավանքի մասին» երկում, կամ տեղի են ունենում հսկայական տարածությունների միջեւ՝ արծազանքումով հեռավոր երկրներում, ինչպես «Ալեքսանդր Նեսկուկ վարքում»: Դեռեւս հնուց ռուսական մշակույթը մարդու համար գեղագիտական եւ բարոյական մեծագույն բարիք է համարում ազատությունն ու լայնարձակությունը:

Շարունակելի
**Ռուսերենից թարգմանությունը՝
Տ. Անդրեաս վրդ. ԵՋԵԿՅԱՆԻ**

Զմրուխտ վագերի սգերգը

← էջ 6

Իմ դասընկեր Արամի հետ դպրոցից տուն վերադառնալիս միջինից բարձր տարիքի այդ ու կին տեսանք, որոնք երիտասարդ զույգին վայել ջերմությամբ թեւանցուն՝ դեպի գյուղամիջի ավտոբուսի կանգառն էին բարձրանում:

– Իմ կնքահոր ծնողներն են,– ասաց Արամը, արագաքայլ մոտեցավ նրանց ու հարգանքով բարեկեց:

Տղամարդը, որ հրացայտ աչքեր ուներ, վարդաճերմակ, խնամքով սափրված առողջ այտեր եւ կոկիկ, վայելուչ հագուկապ, ինձ ամենեւին անծանոթ էր, իսկ կնոջն իսկույն ճանաչեցի՝ Արամենց թաղեցի է, անունն էլ՝ Լուսին: Միշտ բարեհամբույր տիկին Լուսինը գորովանքով շոյեց Արամի գլուխը եւ դառնալով ամուսնուն՝ ասաց.

– Մեր սանիկ Արամն ի՞նչ Զակոբի տղան, ուսման բացարձակ գերազանցիկ ի:

Տղամարդը լայն ժպտաց Արամին, փոքրին խոնարհվեց, պատիվ արավ ձեռքով բարեկեց չորրորդ դասարանցի տղեկին: Արամն ուրախ վերադարձավ ու շնչակտուր՝ թե.

– Այ՛ էդ մարդն ի Սարքիսենց Քեղամը. ասես եմ՝ սֆտակ արջերի երկրում՝ Սիբիրի բանտերում, ուղիղ քսանչորս տարի նստիր ի...
Այդ օրվանից ճանաչեցի «սիբիրական Քեղամին»:

Ամեն Աստուծո օր նա մեղմում-պարպում էր բիրտորեն վանդակված անհաշվելի ցուրտ օրերում անթեղված կարոտի ցավը, իսկ հիմա անկաշկանդ քայլում է հայրենի արեւոտ ճամփաներով... Կնոջ հետ ամուշ գրուցելով՝ մեր ձորափնյա փո-

ղոցով էլ իրենց երբեմնի հեկտարանոց խաղողի ծիւղն այգուց բաժին մնացած փոքրիկ տնամերձն էին գնում:

Գեղամը գյուղում հասակակից ընկերներ գրեթե այլեւ չուներ. նրանք կամ ստալինյան բռնաճնշումների գոհ էին դարձել, կամ երկրորդ աշխարհամարտի... Հաճախ էր նա այցելում իրենից բավականին կրտսեր ընկերոջը՝ մեր դրկից հյուան Սարգիս Մուրադյանին: Հոգով, ըմբռնումներով մտերիմ ընկերներ էին նրանք, երկար զրուցում էին լուրջ ու ծիծաղ բաներից, առանձին տարիներ էլ Ռուսաստան՝ առեւտրաշահ գործերի գնում: Թվում էր՝ նրանց ընկերությունը նախասահմանված էր...

...Արդեն երեսանի պետական համալսարանի չորրորդ կուրսի ուսանող դարձած Արամը, իր հեղինե մայրիկի խնդրանքով, Գեղամի հետ Գեղամա լիճ Սեւան են գնում՝ մեր կողմերում շատ հարգի սննդատեսակի համար խիտ աղաջրով պահվող պատմական մարդկանց եւ հատկապես Սեւանի ձկնորսների հետ, զարմացած էր նաեւ նրա շահեկան առեւտուր անելու հմտության վրա: Եվ ապագա փիլիսոփայության դոկտոր Արամ Սարգսյանը կես լուրջ, կես կատակ մի խիստ հավակնոտ համոզմունք էլ հայտնեց. «Համարն Գեղամի՛ ինչ հնարավոր անվանի դիվանագետ կունենար մեր պետությունը...»:



Ժամանակ անց գյուղում մի ցնցող ահավոր լուր թնդաց. Գեղամը որսորդական հրացանով... սպանել է կնոջը... Ինչ էր կատարվել, ինչ քամիներ էին փոթորկվել գլխում՝ հին օրերի խանդ, պատվախնդրություն, կենցաղային խնդիր, կպչուն-սեւեռուն մտքեր... այդպես էլ ոչ ոք չիմացավ բուն պատճառը: Նույնիսկ դատավարությունը ծածկամիտ Գեղամից ճշմարտությունը չպարզեց: Դատարանում ամբաստանյալից միայն խոր զղջումի արտասվախառն խոսքեր լսվեցին...

Օր ծերության նրան կրկին բանտարկեցին՝ այս անգամ պատիժը կրելու Հայաստանի ուղղիչ աշխատանքային հիմնարկների փշալարապատ բարձր պարիսպներից ներս...

Պատժաժամկետից տասը տարի անց համաներում եղավ, եւ Գեղամին ծերության ու հիվանդության հիմնավորումով վաղաժամկետ ազատեցին:

Նրան երկրորդ անգամ կարոտով ու սրտատրոփ էին սպասում: Տնեցիները, մերձավորները, էլի շատերը երես էին թեքել նրանից: Միայն Գեւորգ թոռը, որը բնու-

թյունից բարեմիտ ու բարյացակամ մարդ է, մինչեւ վերջ սատար եղավ ուժասպառ, անօգնական ծերունուն: Պապի խնդրանքով Գեւորգն իր ավտոմեքենայով ամեն կիրակի նրան Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցի էր տանում, ուր Գեղամը սուրբ պատարագ էր լսում, մոմեր վառում, աղոթում առ Աստված եւ Բարձրալից թողություն հայցում՝ իր գործած ու չգործած մեղքերի համար...

Շարունակելի

Սերժ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՉԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝
«Քրիստոնյա Հայաստան»
թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝
Արփիկե Չամբիկյան

Գրանցման վկայական՝ 624
խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հեռախոս՝ (010) 517 280

Էլ. փոստ՝
qristonyahayastan1@gmail.com
qristhay@etchmiadzin.am

web կայք՝
krishayas.wordpress.com
etchmiadzinlibrary.am/en/kristonya-hayastan

Ստոր. տպագր. 18.05.2023 թ.

Տպաքանակը՝ 1265